Տեսեք՝ ինչ պայման է դրել. ես կարշավեմ Սուրբ Էջմիածին, երբ բավականաչափ մաքրված լինեմ մեղքերից: Այս պայմանը հասկանալու համար պետք է առնվազն իմանալ նրա գործած մեղքերի չափն ու կշիռը: Որքան ինձ հայտնի է, մարդուն տրված չէ՝ դատել իր մեղքերի մասին, դա որոշվում է այնտեղ՝ երկնքում, ամենատես Աստծու կողմից:

Կարդացեք՝ էջ 5

Իր ներկայիս տեսքով ո՛չ Զելենսկին, ո՛չ էլ երկրի ապագայի մասին մտածող որեւէ ուկրաինացի քաղաքական գործիչ չի ստորագրի այս փաստաթուղթը: Զելենսկու ամբարտավան հայտարարությունները չեն արտացոլում հասարակության մեջ տիրող իրավիճակը: Ուկրաինացիները չունեն կապիտուլյացիայի մտադրություն: Սա շատերին ակնհայտ է:

Կարդացեք՝ էջ 6

Պետք է մեր լեզվից առհասարակ հանենք այդ խմբակին քաղհասարակություն անվանելը, նրանք ՔՊ-ի հասարակությունն են, բայց ոչ երբեք հայաստանյան քաղհասարակություն, իսկ Բաքու կատարած այցից հետո Իլհամի ընտանիքի բանբերի կարգավիճակը ստացան, սակայն այս մարդիկ որեւիցե կերպ առնչություն չունեն քաղհասարակության հետ:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 189 (4091), 25 նոյեմբեր, երեքշաբթի, 2025

www.hraparak.am



Նոյեմբերի 30-ին կավարտվի ՔՊ ընտրացուցակում առաջադրվելու ժամկետը: Մեզ ասացին, որ արդեն մի քանի տասնյակ թեկնածուներ են առաջադրվել, որոնց մեջ շարքային կուսակցականներ էլ կան: Օրինակ, իշխանական կայքի երբեմնի լրագրող Դավիթ Լեւոնյանը, որը Բագրատ սրբազանի հասցեին կեղծ մեղադրանքներ էր հնչեցրել: ՔՊ խմբակցության պատգամավոր Գագիկ Մելքոնյանին երեկ հարցրինք՝ ինքն ի՞ել է առաջադրվել: Ասաց, որ չի շտապում՝ դեռ չի առաջադրվել: Ասում են՝ ցանկություն չունեք: «Ո՞վ է նման բան ասում, ես դեռ մտածում եմ, դեռ շատ ժամանակ ունեմ»: Ավելի ուշ մեզ ասացին, որ Գ. Մելքոնյանը նախ ՔՊ-ին անդամագրվելու դիմում է ներկայացրել, որ 1.5 միլիոն դրամի փոխարեն 500 հազար վճարի՝ իր թեկնածությունը գրանցելու համար: Ինչպես հայտնի է, ՔՊ ընտրացուցակի թեկնածուները պարտադիր պետք է մուծվեն. ՔՊ անդամները՝ 500 հազար, ոչ անդամները՝ մեկուկես միլիոն դրամ: Բացի դա, Մելքոնյանը ենթադրում է, որ ՔՊ անդամ լինելը ցուցակում անցողիկ տեղում լինելու շանսերը մեծացնում է: Բանն այն է, որ ՔՊ-ում կարծում են, թե կուսակցության անդամները պետք է խրախուսվեն, ի տարբերություն իրենց թիմին չմիացածների: Մեզ ասացին, որ նախկին ԲՀԿ-ական Սերգեյ Բագրատյանն էլ է ՔՊ-ական դարձել ու առաջադրվել, իսկ Շիրակ Թորոսյանն ու Խաչատուր Սուքիասյանը չեն առաջադրվել:

ՔՊ վարչությունն առաջիկա օրերին կորոշի, թե ինչ սկզբունքով է տեղի ունենալու պատգամավորության թեկնածուների ընտրությունը: Նրանց ընտրելու են ՔՊ արտահերթ համագումարում, որը, ամենայն հավանականությամբ, կիրավիրեն մարտի վերջերին, այսինքն, ինչպես վարչությունն ընտրեցին, այնպես էլ մոտ հազար պատվիրակ ընտրություն կկատարի առաջադրված եւ վարչության կողմից գրանցված թեկնածուների ցանկից: Նախնական քննարկումներն այն մասին են, որ, դիցուք, 200 թեկնածուից ընտրիչներին ընտրելու հնարավորություն կտան 30 հոգու, այսինքն, ամեն ընտրիչ այդ ցուցակից կարող է 30 հոգու ընտրել, ընտրության արդյունքներով էլ կկազմվի ցուցակը՝ ըստ ձայների քանակի: Ի դեպ, իշխող թիմում քննարկում են նաեւ պրոֆեսիոնալ մասնագետներ իրենց ցուցակում ընդգրկելու հարցը, որպեսզի լինեն լավ տնտեսագետներ, ֆինանսիստներ, քաղաքագետներ եւ այլ մասնագիտության մարդիկ: Իսկ թե ինչպես նրանց ընդգրկել ցուցակում՝ առանց մրցույթի՞, թե՞ մրցույթով, այս հարցերին դեռ չեն հասել:

Նիկոլականի դիմանկար

Փորձենք մոդելավորել, թե ով է ՔՊ իշխանությանը համակրող եւ 2026-ին նրան իր քվեն տալ պատրաստվող ՀՀ քաղաքացին: Նա անպայման Արցախն ու արցախցիներին ատում է եւ կարծում է. «Լավ եղավ, որ այդ բեռից ազատվեցինք»: Բայց առանձնապես չի էլ սիրում Հայաստանի սահմանամերձ մարզերի բնակիչներին, եւ եթե անգամ Սյունիքից, Տավուշից, Գեղարքունիքից ու Լոռուց ինչ-որ կտորներ Հայաստանը կորցնի, առանձնապես շատ չի մտահոգվի: Նա այն կարծիքին է, որ ամեն մարզ ինքն իրեն պիտի պաշտպանի: Անպայման վախկոտ է՝ սարսափում է պատերազմից ու կարծում է, որ ճիշտ է անում Նիկոլ Փաշինյանը, որ Ալիեւի բոլոր բարձրաձայնած եւ անգամ չբարձրաձայնած ցանկությունները կատարում է: Նա արդարացնում է ցանկացած քայլ, միայն թե պատերազմ չլինի: Անպայման ատում է նախկին իշխանություններին եւ մինչեւ 2018-ը ունեցած հիշողությամբ, ասենք՝ պետական որեւէ մարմնի հետ մի տհաճ միջադեպի միակ մեղավոր համարում է այդ օրվա նախագահին եւ ատում է նրան, նրա ողջ ազգուտակին, մերձավորներին, կառավարության բոլոր անդամներին: Այնքան է ատում, որ եթե վաղը Նիկոլ Փաշինյանն անգամ Հայաստանի անունը փոխի եւ Սյունիքը հանձնի թուրքին, նախկինների հանդեպ վրեժի ու ատելության զգացումից դրդված՝ ՔՊ է ընտրելու: Նա անպայման անհավատ է եւ ատում է բոլոր հոգեւորականներին ու կաթողիկոսին, չնայած չի կարող բացատրել, թե ինչու, իսկ Հայ առաքելական եկեղեցին նրա համար ոչ մի արժեք չունի: Նա ոչ միայն անհավատ է, այլեւ Աստծո պատվիրաններն էլ են նրան խորթ եւ հատկապես՝ մի ստիր պատվիրանը, որովհետեւ նա ստելու մեծ վարպետ է եւ սիրում է ստախոսներին ու իրենց խոստումը դրժողներին, որովհետեւ նմանը զնմանին կսիրե: Նրա հայրենիքը Հայաստանը չէ, այլ իր տունը, ազգուտակը, բաժակի ընկերները, կինն ու երեխաները:

ՔՊ խմբակցության անկուսակցական անդամ Անդրանիկ Քոչարյանը, որի դեմ խմբակցությունում մի ստվար զանգված կատաղի պայքար է մղում եւ ձգտում է «գծերից գցել»՝ դուրս մղել իշխանական ռադարներից, առաջադրել է իր թեկնածությունը՝ ՔՊ խորհրդարանական նախընտրական ցուցակում ընդգրկվելու համար: Ասում են՝ ՔՊ-ում շատերը շոկի մեջ են, որ նա առաջադրվել է ֆրակցիայի ղեկավարի երաշխավորությամբ: Հայտնի է, որ Քոչարյանն անկուսակցական է իշխող ֆրակցիայում, իսկ ՔՊ սահմանած խաղի կանոններով՝ անկուսակցականները պետք է վարչության անդամներից մեկի երաշխավորությամբ առաջադրվեն. Քոչարյանին երաշխավորել է Հայկ Կոնջորյանը:

ԱՍՈՒՄ Է. ՈՒԶՈՒՄ ԵՔ՝ ԵԿԵՔ, ՉԵՔ ՈՒԶՈՒՄ՝ ՄԻ ԵԿԵՔ

«Պետական ապարատի հազարավոր ծառայողների պարտադրաբար Համալիր բերելու եւ «մասսովկա» ցույց տալու փաստն արդյոք ապացույց չէ՞ այն բանի, որ իրեն ժողովրդավար հռչակած Փաշինյանն իրականում տառապում է Հյուսիսային Կորեայի բռնապետ առաջնորդ Կիմ Չեն Ընի կոմպլեքսներով եւ փորձում է ցույց տալ, որ հանրության լայն զանգվածների աջակցությունն ունի»,- հարցրինք Փաշինյանի կուսակից, ՔՊ վարչության անդամ Արմեն Խաչատրյանին: «Սխալվում եք, եթե մենք ուզենանք մարդ հավաքել, 40 հազար էլ կհավաքենք, հարցը դա չէ, պետք չէ պղտորել, խեղաթյուրել»: Բայց վերջին պատարագներին մենք տեսնում ենք, թե դուք ինչքան մարդ եք կարողանում հավաքել: «Պատարագին մենք մարդ չենք հավաքում»: Փաշինյանն ամեն այցից առաջ հայտարարում է, եւ դա որպես կոչ է ընկալվում: «Լավ է անում, ասում է՝ ես գնում եմ, ուզում եք՝ եկեք, չեք ուզում՝ մի եկեք»: Իսկ շաբաթ օրվա հավաքի նպատակը, ըստ Խաչատրյանի, «վարչապետն արդեն իր ելույթներում ասաց, թե որն է, այո՝ պետական ծառայողները պետք է հասկանան երկրի ռազմավարությունը, քաղաքականության ռազմավարական ուղղությունները եւ այլն: Սա շատ ճիշտ հավաք էր, ու, ի հակադրումն Ձեր նշածի, պետծառայողներից շատերը շատ գոհ էին, իրենք հասկացել են, որ մասն են կազմում այս երկրի զարգացման պրոցեսներին, եւ իշխանությունը հաշվետու է իրենց առաջ, իսկ ով չի ուզել, հաստատ չի եկել»: Ի դեպ, Համալիրում կազմակերպված միջոցառմանը մասնակցել են նաեւ իրավապահների, ուժայինների ներկայացուցիչները, մոռացել են միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

ԳԵՐԻՆԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՔՐՈՒՄ Է 30 ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԻՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արեգ Քոչինյանը որոշել է խմբագրել Բաքվի բռնապետ Իլհամ Ալիեւի խոսքերը: Դիտարկմանը, որ Ալիեւը հայաստանյան տեղանուններն անվանում է ադրբեջանական անվանումներով, այդ թվում Սեւանը՝ Գյոյչա, նա ասել է, որ «նախագահի խոսքը որեւէ կերպ չարդարացնելով կամ չպաշտպանելով, ինձ համար դա քննադատելի խոսք է եղել, բայց

պատվավոր նախագահ Բորիս Նավասարդյանը, քաղաքագետներ Արեգ Քոչինյանը, Նարեկ Մինասյանը, Սամվել Մելիքսեթյանը, իրավապաշտպան Նաիրա Սուլթանյանը: Նշենք նաեւ, որ հոկտեմբերի 22-ին Երեւանում տեղի էր ունեցել երկու երկրների քաղհասարակությունների առաջին հանդիպումը՝ կլոր սեղան, որին մասնակցում էր նաեւ Լաչինի միջանցքը մեկ տարի փակած էկոակտիվիստ կոչվածներից մեկը:

Երեկվա ասուլիսի ժամանակ այլ արտառոց հայտարարություններ էլ արվեցին: «Գերիներին տեսակցելն առաջնահերթություն չէր մեր կողմից, թեեւ այդ հարցը մենք Երեւանում բարձրացրել էինք. մեզ համար կարեւորը՝ վերադարձի առումով լինի առաջընթաց. հիմնականում այդ հարցին է եղել անդրադարձ: Հարցը քննարկվում է, գուցե կստանա որոշակի լուծում, բայց երբ եւ ոնց, եւ ինչպիսի լուծում դա կլինի, երեւի կտեսնենք մոտակա ժամանակում»,- ասել էր Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը: «Պետք է հասկանանք մեկ բան, որ գերիների հարցի նկատմամբ ինչպես էմոցիոնալ վերաբերմունք կա մեր հասարակությունում, նույնպիսի վերաբերմունք կա նաեւ ադրբեջանական հասարակությունում՝ հակառակ նշանով, որ իրենք պատասխանատու են շատ բաների համար, որն Ադրբեջանի հասարակության համար ցավ է, եւ եթե անգամ դա օբյեկտիվ պատկերացում չի, ազդեցություն է թողնում գործընթացի վրա»,- նշել էր Նավասարդյանը: Տպավորություն է, թե հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները խիստ ոգեւորված ու տպավորված են Բաքու կատարած այցից, մի փոքր էլ՝ երջանիկ: Չսահմանափակվելով Ալիեւի խոսքերը խմբագրելով, Արեգ Քոչինյանը հպարտությամբ հասարակությանն է փոխանցել Ալիեւի հայատյաց օգնական Հաջիեւի ուղերձը, թե Ադրբեջանի համար պատերազմն ավարտվել է: Իհարկե, ավարտվել է՝ իրենց ուզածին ամբողջությամբ հասել են եւ հիմա մաս-մաս էլ Հայաստանից են տանում՝ Նիկոլ Փաշինյանի թողտվությամբ, էլ ինչու պետք է նոր պատերազմ ուզենան: Նրանք հիմա միայն մի բան են ուզում, որ Նիկոլ Փաշինյանը վերընտրվի:

Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր **Տիգրան Աբրահամյանը**, որը տարիներ առաջ Բակո Սահակյանի խորհրդականն էր, «Հրապարակի» հետ զրույցում ասում է. ««Քաղհասարակություն» ձեւակերպումը խիստ հարաբերական է: Այնտեղ ընդգրկված էին մարդիկ, ովքեր ներկայացված են իշխանության կողմից, եւ նրանց բոլոր զրույցները հայաստանյան իշխանությունների առաջնահերթությունների շրջանակներում էին: Գերիների եւ առհասարակ հայ ժողովրդի շահերն արտահայտող թեմաների մասին ակնկալիքներ չէինք էլ կարող ունենալ, որովհետեւ այն, ինչ իշխանությունն է, նույնն էլ այդ, այսպես կոչված, քաղհասարակությունն է, եթե կարելի է դրան այդպես անվանել: Ընտրովի մարդիկ են, ովքեր կիսում են օրվա իշխանության մոտեցումները, այդ թվում՝ հայ-ադրբեջանական հարաբերությունների մասով: Ես կարծում եմ, որ այդ խմբից չպետք է որեւիցե ակնկալիք ունենալ: Իշխանությունը խեղաթյուրում է այն բոլոր ինստիտուտները, որոնք մեզանում գործել են, քաղհասարակությունը նույնպես այդ տրամաբանության մեջ է: Իշխանությունը սեփական ստերի կայսրությունն է ստեղծում, որտեղ, օրինակ, ազատ մեդիայի դիրքորոշումը հակացուցված է: Նույնը վերաբերում է քաղհասարակությանը: Այն բոլոր կազմակերպությունները, որոնք հակադրվում են իշխանությունների տեսանկյունին, բնականաբար, կամ թիրախավորվում են, կամ՝ անտեսվում»:

Ո՞րն էր այդ խմբի այցելության նպատակը, բացի Ալիեւի խոսքերը խմբագրելուց եւ Հաջիեւի ուղերձները հայ հանրությանը տեղ հասցնելուց: Հավանաբար, Հաջիեւը լեզու չունի, ոչ էլ սոցիարթակներից ու սեփական մեդիայից օգտվելու ձեւը գիտի, այդ պատճառով է Արեգ Քոչինյանին դիմել, որ իր ուղերձները տեղ հասցնի: «Այդ այցի նպատակն այն է, որ Ադրբեջանն իր հանցագործությունները, որոնք կատարել է վերջին երեք տասնամյակի ընթացքում, փորձում է մաքրել Փաշինյանի իշխանության հաշվին, ինչու, որովհետեւ Փաշինյանի իշխանությունն արտահայտվում է խորհրդարանական բարձրագույն մակարդակով, արտահայտվում է այդ՝ պայմանական քաղհասարակության շրջանակների միջոցով եւ այլն, եւ միմիայն սպասարկում է ադրբեջանական օրակարգերը: Այս պայմաններում բոլոր սպասումներն ու կանխատեսումներն այդ տրամաբանության մեջ են: Հայ ռազմագերիների մասով եկեք արձանագրենք, որ ինքը Սեւանը չի անվանել Գյոյչա»: Բաքվից վերադառնալուց հետո կազմակերպված ասուլիսի ժամանակ հայաստանյան քաղհասարակության ներկայացուցիչ Արեգ Քոչինյանի խոսքով՝ Ալիեւն ասել է, որ կա քարտեզ՝ ռուսական կայսրության, որտեղ Սեւանա լճի վրա գրված է Գյոյչա, եւ որ այդ նույն քարտեզի մեջ «Ադրբեջան» բառ չկա: «Կան քարտեզներ, որոնց վրա գրված է Եւ Սեւան, Եւ Գյոյչա, կա քարտեզ, որտեղ գրված է միայն Սեւան»,- նշել է Քոչինյանը:

Հիշեցնենք. նոյեմբերի 21-ին ՀՀ քաղհասարակության ներկայացուցիչներ էին մեկնել Բաքու: Նրանք էին՝ Երեւանի մամուլի ակումբի

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԵԹԵ ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՐՑՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ ՉԷՐ, ԻՆՉՈ՞Ւ ԷԻՔ ՀԱՍԵԼ ԲԱՔՈՒ



Հայ ռազմագերիները Բաքվում խոշտանգվում են՝ Ռուբեն Վարդանյանի եւ Բակո Սահակյանի լուսանկարներից ակնհայտ է դառնում, որ նրանք դաժան կտտանքների են ենթարկվում, եւ Կարմիր խաչի միջազգային կազմակերպությունն արդեն վաղուց չի այցելում նրանց: Անկախ փաստաբաններ, լրագրողներ, միջազգային հանրության ներկայացուցիչներ եւս չեն կարողանում այցելել նրանց եւ անաչառ տեղեկատվություն հաղորդել մեզ: Օրեր առաջ էլ իբրեւ թե դատավարությունն ավարտվեց, եւ Ադրբեջանի դատախազը նրանց համար դատարանից պահանջեց ցմահ ազատազրկումից մինչեւ 18 տարի ազատազրկում:

Բակո Սահակյանի ատամնաբույժը «Հրապարակի» հետ զրույցում դեռ ամիսներ առաջ նշել էր, որ վերջինիս ատամները, նախքան գերությունը, կոտրված չեն եղել, առջեւի բոլոր ատամներն առկա են եղել, իսկ հատուկենտ կադրերում երեւում է, որ ատամները վնասված են: Ռուբեն Վարդանյանի ճակատի հատվածում եւ դեմքի այլ մասերում կապտուկները եւս խոսում են այն խոշտանգումների մասին, որոնք կիրառվում են նրա նկատմամբ, միջազգային փորձագետները նշել էին, որ դրանք երկաթե աքցանների հետքեր են, որոնցով խոշտանգել են Ռուբեն Վարդանյանին: Չնայած այս բոլոր դաժանություններին, Հայաստանից ինչ-որ անձինք, ովքեր ներկայանում են որպես քաղհասարակություն, մեկնել էին Բաքու: Այդ այցը հասկանալի կլիներ, եթե նպատակը լիներ գերիներին այցելելը կամ նրանց հարցը բարձրացնելը, սակայն պատվիրակության անդամներից մեկը՝ Բորիս Նավասարդյանը, հայտարարեց, որ այս այցի ժամանակ հայ ռազմագերիների հարցն իրենց համար առաջնահերթություն չի եղել:

2023 թվականի նոյեմբերի 7-ին Բաքվի դատարանը հրապարակել էր արցախցի գերիներից առաջինի՝ 68-ամյա Վագիֆ Խաչատրյանի դատավճիռը: Նրան մեղադրեցին 1992 թվականին Մեշալի գյուղում տեղի ունեցած ինչ-որ դեպքերի մեջ, ինչ-որ կեղծ վկաներ բերեցին դատարան եւ դատապարտեցին 15 տարվա ազատազրկման: Այս դատավարության ընթացքը պարբերաբար հեռարձակում էին ադրբեջանական լրատվամիջոցները: Ազատազրկման առաջին 5 տարին, ըստ ադրբեջանական դահիճ դատարանի կայացրած դատավճռի, Խաչատրյանը պետք է անցկացնի բանտում, իսկ մնացածը՝ խիստ ռեժիմի գաղութում: Հիշեցնենք, որ 2023-ի հուլիսի 29-ին Ադրբեջանի սահմանապահ ծառայությունը Հակարի կամրջի մոտից առեւանգել էր Վագիֆ Խաչատրյանին, որն անհետաձգելի բուժօգնություն ստանալու համար փորձել էր Արցախից Հայաստան տեղափոխվել: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ նրան մեղադրանք է ներկայացվել, ըստ որի՝ Վագիֆ Խաչատրյանն իբր հանցավոր խումբ է ստեղծած եղել, որը 1991թ. դեկտեմբերի 21-ին մասնակցել է Խոջալուի շրջանի Մեշալի գյուղի բնակիչների դեմ իրականացված «հանցագործություններին»: Խաչատրյանը դատական նիստերի ընթացքում բազմիցս հայտարարել է, որ որեւէ հանցագործություն չի կատարել: Եվ այն լուսանկարը, որը բերվել է դատարան՝ ենթադրյալ հանցագործի, իր երիտասարդ տարիների լուսանկարը չէ՝ այլ անձի լուսանկար է:

Վագիֆ Խաչատրյանի դուստրը՝ **Վերա Խաչատրյանը**, «Հրապարակի» հետ զրույցում հույս հայտնեց, որ կարծում է, թե մի բան անում են իր հորը վերադարձնելու ուղղությամբ: «Վերջին անգամ զանգահարել է մի քանի օր առաջ: Կարմիր խաչի միջոցով չի եղել զանգը, սակայն, թե ինչպես է եղել, չգիտեմ: Հարցրի՝ ո՞նց ես, հայրս ասաց, որ լավ է, չգիտեմ, հույս ունեմ, որ ամեն ինչ անում են նրան վերադարձնելու ուղղությամբ»,- ասաց նա:

Մենք կապվեցինք նաեւ Ռուբեն Վարդանյանի քրոջ՝ հայտնի երգահան Մարինե Ալեսի հետ: Նա ասաց. «Ես այդ թեմաների մասին չեմ ուզում խոսել: Այսօր իմ ծննդյան օրն է: Ես չեմ նշում, բնականաբար, բայց, իհարկե, եւ ոչ մի խոսելու բան էլ չունեմ՝ մանավանդ՝ այսպիսի օրով: Տնից դուրս չեմ գալիս, միայն գնացել եմ մեր հայրիկի գերեզման: Ինձ համար շատ ցավալի թեմա է սա, ինձ պետք չէ, որ հիմա շատ բան խոսեմ»:

ԱՅԴՊԻՍԻ ՊՈՍՏԵՐ ԿԱՆ՝ ՄԵՆՔ ԱՆՑՆՈՒՄ ԵՆՔ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՄԻՋՈՎ, ԻՐԵՆՔ՝ ՄԵՐ

*Հարցազրույց ԱԺ պաշտպանության հանձնաժողովի անդամ, ՔՊ-ական **Արմեն Խաչատրյանի** հետ*

- Պայմանագրային հիմունքներով ծառայող անձը վերջերս հարցազրույց էր տվել ու ասել, որ Սեւ լճի դիրք բարձրանալուց հայ զինվորներին ադրբեջանցիները ստուգում են, նոր են թողնում, թույլ են տալիս ընդամենը 2 օրվա սնունդ տանել իրենց հետ, ու որ այս մասին գիտեն ՊՆ-ում: Ինքնիշխան պետությունում այդպե՞ս է կարգը՝ թշնամու թրի տակո՞վ պետք է անցնեն հայկական դիրք բարձրացող հայ զինվորները:

- Եթե նման բան է ասել, պետք է ստուգվի, թե ով է ասել եւ ինչու է նման հայտարարություն արել, եւ որտեղ է հրամանատարական կազմը, Ես հետամուտ եմ եղել, որ ճշտենք: թե ով եւ ինչու է նման բան ասել, ու պարտադիր պետք է պարզվեն հանգամանքները: Ինձ համար շատ զարմանալի է, որ ինչ-որ մի կամավոր նման հայտարարություն է անում:

- Այսինքն, դուք ծանո՞թ եք այդ հայտարարությանը եւ հետաքրքրվե՞լ եք դրանով ու ի՞նչ եք պարզել:

- Ես ճշգրտումներն անում եմ ՊՆ-ից, խնդրել եմ, որ ինձ տեղյակ պահեն, թե ինչի մասին է խոսքը, հրամանատարությունը պետք է պարզի՝ դա ինչ հայտարարություն էր, ինչի համար եւ այլն: Առայժմ տեղեկություն չունեմ, բայց կարծում եմ՝ օրերի ընթացքում ամեն ինչ պարզ կդառնա:

- Փաստորեն, ադրբեջանցիները ոչ միայն տնավորվել են մեր սուվերեն տարածքում, այլեւ որոշում են՝ ինչը ոնց անել: Նույնն էլ կարծես սահմանազատման գործընթացում է, մեկուկես տարի առաջ Տավուշի հայտնի տարածքները տալուց հետո ասում էիք, թե Տավուշից կշարունակվի գործընթացը, մենք ստանալիք տարածքներ ունենք, բայց տարիուկես գործընթացը առկախված մնալուց հետո հիմա էլ ասվում է՝ Սյունիքից կշարունակեն: Ակնհայտ է, որ Ադրբեջանը որտեղից ստանալիք ունի, այնտեղ էլ գործընթաց է սկսում, ո՞ր տարածքներն են ձեր հայրենի Սյունիքում ուզում:

- Տավուշի առաջնայնությունը Սյունիքով փոխարինելը ոչ թե պայմանավորված է տարածքների վերադարձման խնդրով, այլ Թրամփի ուղու կառուցման հրատապությամբ: Օգոստոսի 8-ից հետո իրավիճակ փոխվեց, եւ որպեսզի այդ ճանապարհը կառուցվի, շատ հրատապ այդտեղ պետք է սահմանազատման գործընթաց իրականացվի, որ հասկանանք՝ ճանապարհը որտեղից է սկսվում, որտեղ՝ ավարտվում: Կիրանցում սահմանազատումը շատ հաջող իրականացվեց, մենք արդեն ունենք փորձը եւ կարող ենք փաստել, որ սահմանային պահպանության հարցը տասնյակ անգամ հեշտացել է, այնտեղ սահմանապահ զորքերն են կանգնած, ՀՈՒ ներկայացուցիչներ չկան: Միեւնույն ժամանակ վստահ եմ, որ այն տարածքները, որոնք գտնվում են Ադրբեջանի օկուպացիայի ներքո, պետք է վերադարձվեն Հայաստանին:

- Մինչեւ օգոստոսյան հռչակագիրը սահմանազատման գործընթացը կանգնած էր, Կիրանցի սահմանազատումից մեկուկես տարի է անցել, ինչո՞ւ այս ընթացքում չվերադարձրիք օկուպացված տարածքները՝ Ադրբեջանին պարտադրելով, որ հենց այդ տարածքում սահմանազատում արվի:

- Տարիուկես ինչու է կանգնած, որովհետեւ այդ գործընթացները միայն ՀՀ-ով պայմանավորված չեն, պայմանավորված են նաեւ Ադրբեջանի իշխանությունների կամքով, քաղաքական որոշումներով, ընթացակարգերով, դրա համար երբեմն պրոցեսները դանդաղում են, հետո՝ նորից արագանում: Այո, նման բաներ կան եւ նորից են լինելու, որովհետեւ, ցավոք սրտի, ամեն ինչի համար միայն մեր որոշումները չեն, որ հիմք են:

- Այսինքն, դուք էլ եք փաստում, որ Ադրբեջանը որտեղ ստանալիք ունի, այնտեղ է սահմանազատում անում:

- Սյունիքում ստանալիք չունի:

- Նռնաձորի հատվածի զգալի տարածքներ ասում են, որ իրենցն է, իրենք են բարձրաձայնում:

- Ոչ, ոչ, ուղղակի ճանապարհի շինարարության համար պետք է օր առաջ սահմանազատված տարածք ունենանք:

- Բայց մեր տարածքները վերադարձնելու փոխարեն, նոր տարածքային նկրտումների մասին են բարձրաձայնում, դուք հավատո՞ւմ եք, որ ինքնակամ կհեռանան օկուպացրած տարածքներից...

- Այո, ես ոչ միայն հավատում եմ, այլեւ դա պարտադիր է, մեր տարածքները մինչեւ վերջին սանտիմետրը պետք է մեզ վերադարձվեն:

- Անցնենք 44-օրյա պատերազմի հանգամանքները քննող հանձնաժողովի աղմուկ հանած զեկույցին.

- Եթե դա դրվեր քննարկման, լայն տարածում կգտներ, իսկ գաղտնի բաժնում պատգամավորները եթե անգամ ծանոթանում են, իրավունք չունեն այդ մասին խոսել: Եվ հետո՝ ապրիլյանի զեկույցի ժամկետներն էլ էին խախտված, բայց դա ձեզ պետք էր, Արարատ Միրզոյանը, անտեսելով ժամկետի խնդիրը, հրապարակեց, իսկ 44-օրյայի զեկույցը ձեր դեմ ինքնախոստովանական ցուցմունք է լինելու: Բացի դա, հիմա հերքում եք, որ Արցախը մերն է եղել, բայց զեկույցով ստիպված եք լինելու ցույց տալ, թե ինչեր եք արել, որ մեր Արցախում հաղթենք:

- Զեկույցի հրապարակումը քաղաքական առումով, կոպիտ ասած, իշխանությանն է ձեռնտու:

- Ինչո՞ւ՝ ընդդիմությունն է պատերազմը պարտվել:

- Դե, տեսեք, եթե այնտեղ փաստեր լինեին, որ իշխանության համար շատ վատ իրողություններ կառաջացնեն, ընդդիմությունն այդ մասին արդեն բարձրաձայնած կլիներ, որովհետեւ մտնում եւ ծանոթանում են զեկույցին:

- Բայց զեկույցը գաղտնի բաժնում է, քրեական պատիժ է հասնում հրապարակողներին:

- Կապ չունի, որոշակի բաներ կան, որ կարող են խոսել, որ, այ, գիտե՞ք ինչ՝ իշխանությունը նման բաներ է արել:

- Ակնարկներ հնչել են Գեղամ Մանուկյանի եւ Տիգրան Աբրահամյանի կողմից, բայց բովանդակությունը չեն կարող գաղտնազերծել:

- Եթե պետք է եղել, իրենք խոսել են, գաղտնիությանը չեն նայել, հիմա գնում ծանոթանում են եւ ոչինչ չեն ասում, սա հաստատում է միտքը, որ էնտեղ մեր դեմ բան չկա, հակառակը՝ շատ ու շատ տեղերում իշխանությանն է ձեռնտու այս զեկույցը:

- Դե հրապարակեք, ինչո՞ւ եք հապաղում:

- Կանոնակարգային հարաբերություններ են, եւ ԱԺ նախագահը որոշել է, որ կանոնակարգի տառին համապատասխան, վարչարարությունը պետք է իրականացվի:

- Դուք քանի տարի աշխատել եք այդ հանձնաժողովում, ո՞նց եք վերաբերվում, որ այն ժամկետանց համարելու պատրվակով չհրապարակվեց: Ոմանց կարծիքով, քաղաքական որոշում է կայացվել՝ նախընտրական շրջանում իշխանությանը չթիրախավորելու նպատակով:

- Ժամկետների խնդիր կար, բայց իմ կարծիքն այն է, որ այս զեկույցն անպայման պետք է ներկայացվի, թեեւ հիմա բոլոր պատգամավորները հնարավորություն ունեն՝ գնան ծանոթանան, կարդան, որեւէ խնդիր չկա, բայց կարծում եմ՝ ինչ-որ ֆորմատով ԱԺ դահլիճում այն պետք է ներկայացվի պատգամավորներին, եւ պատասխանեն նրանց հարցերին, թեկուզ՝ գաղտնի ֆորմատով: Դա պատմական փաստաթուղթ է եւ մնալու է արխիվում, ո՛չ կկորի, ո՛չ կցնդի:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԳԱԳԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆՆ ՈՒ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԸ՝ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երեւանի նախկին քաղաքապետ, կապի եւ տրանսպորտի նախկին նախարար Գագիկ Բեգլարյանի դեմ իրավապահ մարմինները շարունակում են ինտենսիվ աշխատել: Նրա դեմ բազմաթիվ վարույթներ կան, այդ թվում՝ ապօրինի գույքի բռնագանձման հայցեր: Մենք տեղեկացանք, որ գլխավոր դատախազությունը Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան Բեգլարյանի դեմ նոր հայց է ներկայացրել՝ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով, եւ մակագրվել է դատավոր Լիլի Դրմեյանին: Հակակոռուպցիոն դատարանից մեզ հայտնեցին, որ գործը դեռ նոր է մակագրվել կազմին, 7-օրյա ժամկետում կամ վարույթ կընդունվի, կամ հայցը հետ կվերադարձվի:

Սա Բեգլարյանների դեմ երրորդ քաղաքացիական հայցն է՝ տարբեր պահանջներով, մյուս երկուսն այժմ դատաքննության փուլում են: Սեպտեմբերից դատավոր Նարինե Ավագյանի վարույթում քննվում է Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության հայցը՝ Գագիկ Բեգլարյանից 77 միլիոն դրամ բռնագանձելու պահանջով: 2 տարի առաջ էլ Գլխավոր դատախազությունը մեկ այլ հայցադիմում էր ներկայացրել Գագիկ Բեգլարյանի դեմ՝ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով: Այս գործը եւս գտնվում է դատավոր Նարինե Ավագյանի վարույթում, դրա քննությունը դեռեւս շարունակվում է:

Բեգլարյանների ներկայացուցիչ **Մարգարիտա Ղազարյանը** մեզ ասաց՝ դեռեւս չեն ստացել նոր հայցադիմումը. «Մենք դեռեւս հայցադիմումը չենք ստացել, չենք կարող ձեր հարցերին պատասխանել»: Հարցին, թե պարզաբանում կամ բացատրություն չե՞ն ներկայացրել ուսումնասիրության փուլում, իր վստահորդը չի՞ ներկայացել դատախազության համապատասխան վարչություն, ներկայացուցիչն արձագանքեց. «Դատախազությունում բացատրություն ես չեմ տվել, ինչքանով ես գիտեմ՝ շահագրգիռ անձինք եւս չեն ներկայացել, բայց այդ մասով իմ ինֆորմացիան հստակ չէ: Հայցադիմումը քանի որ չենք ստացել, չենք կարող ասել ցանկը»:

Առաջին քաղհայցի վերաբերյալ փաստաբանն ասաց, որ ներկայացվել է հայցի հիմքի լրացման վերաբերյալ միջնորդություն, որը բավարարվել է. «Մենք ներկայացրել ենք հայցադիմումի պատասխանը, եւ առաջիկա նիստում այն կներկայացվի: Որոշ պահանջներից հրաժարվել են, այսինքն՝ հայցի առարկայի լրացում այստեղ չունենք, կա հիմքի լրացում: Եղած գույքերից որոշներից դատախազությունն իր պահանջից հրաժարվել է: Չեմ կարող ասել՝ այս պահին որոնցից է հրաժարվել, չեմ հիշի»: Դա թերեւս Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա է արվել: Այդ որոշմամբ սահմանափակվել են բռնագանձման ենթակա տարիներն ու գույքի շրջանակը:

Բացի սրանցից, Գ. Բեգլարյանն անցնում է նաեւ քրեական գործով: Մոտ երկու շաբաթ առաջ Հակակոռուպցիոն դատարանում՝ դատավոր Վարդգես Ստեփանյանի նախագահությամբ, Բեգլարյանի եւ նրա հետ փոխկապակցված Գագիկ Գյանջումյանի եւ Գագիկ Բաղդասարյանի գործով նախնական դատալսումներն ավարտվեցին, եւ անցան հիմնական դատալսումների փուլին: Գագիկ Բեգլարյանին ներկայացված մեղադրանքը վերաբերում է պաշտոնեական դիրքի չարաշահմանը, որն առաջացրել է ծանր հետեւանքներ, ինչպես նաեւ՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի օտարում: Բեգլարյանը մեղադրանքը չի ընդունում եւ վստահ է, որ վերջում արդարացվելու է:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՈՎՔԵՐ ՆՐԱՆ ՁԱՅՆ ԵՆ ՏՎԵԼ, ՔԱՐՏԵԶԸ ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ԵՎ ԱՅԴ ՀԱՐՑԵՐԸ ՏՎԵՔ

Հարցազրույց քաղաքագետ ***Արթուր Խաչիկյանի*** *հետ*

- Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը Նիկոլ Փաշինյանին պարգեւատրեց Ղազախստանի պետական բարձրագույն պարգեւով՝ «Ոսկե արծիվ» շքանշանով: Ըստ Ձեզ, սա Տոկաեւի՞ նախաձեռնությունն է, թե՞ Ալիեւի:

- Բոլորը հասկանում են, որ սա Ալիեւի, Էրդողանի եւ թուրք աշխարհի պարգեւն է ազգային դավաճանին: Այս մարդը եւ իր խումբը մեր պատմության մեջ դարերով մնալու են որպես ամենախայտառակ եւ ամոթալի պետական դավաճանների խումբ: Եվ նա մեր հայրենիքը ծախելու համար չի ամաչում, երես ունի գնալ եւ պարգեւատրվել. Արցախը հանձնելու համար, Մեղրին հանձնելու համար, 5 հազար տղա սպանելու համար գնում է՝ մեդալ է ստանում: Գիտեք, ես չգիտեմ, թե որն է ավելի խայտառակ՝ իր արածը, թե՞ որ մեր հասարակությունը սա հանդուրժում է:

- Ղազախստան ոչ թե ԵԱՏՄ-ի շրջանակներում է այցելել, այլ առանց որեւէ օրակարգի՝ մեդալ ստանալու: Մեդալը հանձնել են, հավանաբար, թյուրքական պետությունների շահերը պաշտպանելու անգնահատելի ջանքերի համար: Այս կոնցեպտը մեզ ինչ-որ բան հուշո՞ւմ է՝ Հայաստանի հետագա արտաքին քաղաքական կուրսի առումով:

- Նա հանձնեց մեր միակ կարեւոր քարտը՝ դա Մեղրիի միջանցքն էր: Նա ստեց, իր խումբը ստեց, դրա համար հարձակվեցին վրաս, որովհետեւ ես միանգամից ցույց տվեցի, որ սա ԹՐԻՓ չի՝ սա միջանցք է: Նրանք հանձնեցին մեր ամենակարեւոր խաղաքարտը՝ ոչ մի բան չստանալով եւ խաբելով մեր Ժողովրդին: Մեր շուրջը հիմա սեղմվելու է այդ օղակը, այդ պարանը հիմա մեր վզին է, եւ հիմա այդ պարանը քաշելով՝ մեզ խեղդելու են: Հիմա, երբ Տիգրանաշենը հանձնի, Սյունիքն ընկնելու է տոտալ շրջափակման մեջ:

- Քարտեզին նայողները դա հասկանո՞ւմ են:

- Դուք պիտի հորդորեք լրատվամիջոցների Ձեր բոլոր գործընկերներին՝ գնալ Վաղարշապատ եւ այդ քարտեզը մարդկանց ցույց տալ: Չնայած վաղարշապատցիները չեն ընտրել սրանց՝ նրանք մեղավոր չեն: Այն մարդիկ, ովքեր նրան ձայն են տվել, այդ քարտեզը նրանց ցույց տվեք եւ իրենցից հարցրեք՝ դա է կարեւորը:

- Իսկ ԱՄՆ դիվանագիտական շրջանակներն ինչպե՞ս են ընկալում այդ ճանապարհը՝ TRIPP, թե՞ «Զանգեզուրի միջանցք»:

- Նրանց տեղը խոսում է նրանց դեսպանը Թուրքիայում, խոսում է Ալիեւը, խոսում է Էրդողանը: Ալիեւը շատ լավ հարաբերություններ ունի Իսրայելի հետ, Թրամփի հետ, եւ նրանք սա կոչում են «Զանգեզուրի միջանցք»: Այդ անունը՝ TRIPP, տրվել է այս դավաճանների խմբին, որ կարողանան շարունակել մեզ խաբել. սա ուղղակի խաբեություն է, եթե մեր տարածքում չեն լինելու մեր ներկայացուցիչները, չեն լինելու սահմանների վերահսկողություն եւ մաքսատուն, սա արդեն մեր տարածքը չէ: Իսկ անունն ինչ ուզում եք, կարող եք դնել՝ կարող եք անվանել roller coaster կամ Լունա պարկ՝ դա բնույթը չի փոխում:

- Իսկ ռուս-ուկրաինական պատերազմի ավարտը կարո՞ղ է խառնել քարտերը, թե՞ Թրամփը Պուտինի հետ արդեն կարող է որոշակի համաձայնության եկած լինել:

- Հնարավոր է, որ համաձայնություններ լինեն ԱՄՆ-ի ու Ռուսաստանի միջեւ, ես դրա մասին ամիսներով խոսում էի՝ արդեն մեկ տարի ասում եմ, որ շատ հնարավոր է, որ մեր մեջքի հետեւում պայմանավորվածություն կա: Եթե մենք ունենայինք նորմալ ղեկավարություն, ոչ թե, կներեք, կիսախելագար լակոտների խումբ, մենք հիմա ոչ թե այստեղ կենթադրեինք, թե ինչ է եղել, այլ կունենայինք աղբյուրներ Մոսկվայում, Վաշինգտոնում եւ կիմանայինք, որ մեր մեջքի հետեւում բանակցություններ են գնում, եւ կկարողանայինք դա կանխել:

- Ի՞նչ է լինելու 2026-ին, եթե Նիկոլ Փաշինյանը վարչական ռեսուրսի կիրառմամբ նորից հաղթի ընտրություններում:

- Այդ հարցը պետք է տալ Վաղարշապատի այն գյուղերում, որտեղ ասֆալտի համար սրան ընտրեցին: Մարդկանց հարցրեք. դուք ո՞նց եք կարծում՝ ի՞նչ կլինի, եթե Տիգրանաշենը զիջի, Սյունիքը հարավից ու հյուսիսից կտրվում է, արեւելք-արեւմուտքից էլ կտրված է, ինչ եք կարծում՝ ո՞նց է լինելու: Այդ մարդկանց հարցրեք, շատ ավելի կարեւոր է, թե նրանք ինչ էին մտածում, երբ այս աղանդին ձայները տվեցին:

- Իսկ Փաշինյանն ու իր քաղաքական թիմը կկարողանա՞ն ամբողջությամբ դուրս բերել ռուսական ներկայությունը Հայաստանից՝ տնտեսական կապերի խզում, ռուսական ռազմաբազայի դուրսբերում:

- Դա իրենց պատվերն է, նրանք բերվել են Անգլիայի, Միացյալ Նահանգների, Թուրքիայի կողմից հենց դրա համար: Նրանք բազան կարող են փակել, դա մեզ բացարձակ անզոր կդարձնի՝ մենք ոչ մի դիմադրություն չենք կարողանալու ցույց տալ, մենք կվերադառնանք Արեւմտյան Հայաստանի կարգավիճակին, երբ որ քրդերն ու թուրքերը հայերին մորթում էին, նրանք էլ նամակ էին գրում Փարիզ, Լոնդոն, Մոսկվա, որ իրենց օգնեն, հասնեն, փրկեն: Մենք վերադառնալու ենք այդ վիճակին՝ դա պետք է բացատրել մեր Ժողովրդին: Ոչ թե Յութուբով, Ֆեյսբուքով խոսել, այլ պետք է գնալ ու գյուղերում այդ հարցերը տալ:

- Իսկ այդ աշխատանքն ո՞վ պետք է անի՝ ընդդիմությունը:

- Իհարկե: Աղանդը շատ լավ աշխատում է գյուղերում, իրենք ունեն լավ կազմակերպված փիառ բանակ, մեկը մի նորություն է գցում, 50 հոգով սկսում են տարածել, հիստերիա են ստեղծում եւ Ժողովրդի գլուխը լվանում են: Մեր ընդդիմությունը պետք է նույն ձեւով ինտեգրվի, բոլոր ընդդիմադիր լրագրողները պետք է միասին աշխատեն եւ գնան գյուղերը, մարդկանց հարց տան՝ Արցախը զիջեցին, այն օրը Տավուշի, այսպես կոչված, անկլավներն են զիջել, հետո Ջերմուկի բարձունքներն են զիջել, հիմա Մեղրիի միջանցքն են զիջել, շուտով Տիգրանաշենն են զիջելու, դուք ո՞նց եք կարծում՝ սա մինչեւ ո՞ւր է գնալու, Ալիեւն էլ արդեն Սեւանի մասին է խոսում: Այդ հարցը այդ մարդկանց՝ այդ քվեարկողներին պետք է տալ, որ հասկանանք, թե ինչ է կատարվում նրանց գիտակցության մեջ:

- Վազգեն Սարգսյանը Մեղրիի մասով մի հայտնի արտահայտություն ունի. 1999 թվականի օգոստոսին՝ Սյունիք այցելության ժամանակ ասել է. «Մեղրին մի օր պայթելու է Երեւանի հենց կենտրոնում»: Այսինքն, կանխորոշվա՞ծ է այս վիճակը:

- Երեւի դա նկատի ուներ, բայց նա դա երբեք չէր կարող պատկերացնել, երբեք, որ կգա մի խումբ, որն այսպես կդավաճանի մեր ժողովրդին, այսպես կխեղճացնի Հայաստանը, եւ մեր ընտրողները, փաստորեն, երրորդ անգամ այս խմբին կընտրեն: Նա երբեք չէր պատկերացնի, ես էլ: Իհարկե, ես Վազգեն Սարգսյան չեմ, իմ ամենավատ երազում չէի պատկերացնի, որ այսպիսի բան կլինի Հայաստանի հետ:

- Հատկապես որ Վազգեն Սարգսյանի հարազատ եղբայրը Ձեր նշած խմբի հետ ամենասերտ ձեւով համագործակցում է:

- Դե, այդտեղ տարբեր բառեր են օգտագործվում, բայց դա ո՞չ եթերի, ո՞չ էլ լրատվամիջոցների համար է, ցավոք սրտի:

Էջը՝ Հայկա ԱԼՈՅԱՆԻ

ՄԱՐԴՈՒՆ ԱՍԵԼ ԵՆ՝ ՈՆՑ ՈՐ ԹԵ ԴՈՒ ՅՈՒՅՑԻ ԵՍ ԳՆՈՒՄ, ՈՒ ՏԱՐԵԼ ԵՆ ԿԱԼԱՆՔԻ



Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանին ցուցադրաբար ձերբակալեցին: Այդ օրը քաղաքապետարանի մոտ՝ իրենց քաղաքապետին պաշտպանելու եկած մարդկանց նկատմամբ էլ են վարույթներ հարուցել: Զրուցել ենք Վարդան Ղուկասյանի պաշտպան **Արամայիս Հայրապետյանի** հետ:

«Քրեական վարույթ նախաձեռնվեց, որ իրականացվել է զանգվածային անկարգություն, արդարադատությանը միջամտություն՝ խոչընդոտել են քննչական գործողությունների կատարմանը: Այդ վարույթի մեջ կա ոստիկանի ցուցմունք, որն ասում է՝ ես այս մարդուն տեսա, ինքն ագրեսիվ էր, ոստիկանին հրում էր, գնացի՝ բերման ենթարկեցի, ձերբակալեցի: Այդ ոստիկանը ստորագրում է, ցուցմունք է տալիս, մենք վերցնում ենք լրատվամիջոցների տեսագրությունը՝ այդ մարդը բոլորովին այլ տեղ է կանգնած, մոտենում է ոստիկաններին՝ առանց որեւէ բան անելու, ոստիկաններն իներցիայով վերցնում են, դնում մեքենան, բայց տանողները ոչ թե ցուցմունք տվող ոստիկաններն են, այլ Երեւանից բերված կարմիր բերետավորները: Բայց Գյումրու ոստիկանը ցուցմունք տալով, ասում է՝ ես տեսա նրան ամբոխի մեջ, ագրեսիվ էր, բերման ենթարկեցի»,- ասաց փաստաբանը:

Այսինքն, տեսագրությամբ ֆիքսվում է, որ գյումրեցի ոստիկանն ակնհայտ սուտ է խոսում: Հայրապետյանը շեշտում է, որ տեղացի ոստիկանների կողմից ձերբակալված գյումրեցի գրեթե չկա: «Անձանց մեծ մասը բաժին է տարվել հատուկ նշանակության՝ կարմիր բերետավորների կողմից: Տեղական ոստիկաններին երեւի ասել են՝ արի ցուցմունք տուր, որ տպավորություն ստեղծվի, որ դու կարող էիր անձին ճանաչել: Եվ երկրորդ. մարդկանց տարել լցրել են կաբինետները, եւ որ ոստիկանի կաբինետում այդ մարդը նստած է եղել, այդ ոստիկանն էլ ձերբակալման արձանագրություն է գրել եւ ցուցմունք է տվել: Դա օրենքի խախտում է՝ ՀՀ քրեական դատավարության 109 հոդվածն ասում է. ձերբակալում իրականացրած անձը կազմում է ձերբակալման արձանագրությունը, այսինքն՝ ձերբակալման արձանագրությունը պետք է կազմի այն անձը, որը ձերբակալել է, այս դեպքում՝ կարմիր բերետավորները: Այնինչ իրենք բերման են ենթարկել, իսկ արդեն մեկ այլ ոստիկան կազմել է արձանագրությունն ու ցուցմունք տվել»:

Տնային կալանք ու կալանք ստացած անձանց թիվը 45-ն է՝ ասում է փաստաբանը եւ շեշտում՝ այդքան ազատությունից զրկված մարդիկ կան: «Շատ մարդիկ այդտեղ պարզապես ներկա են գտնվել, մարդիկ կան, որ հետաքրքրությունից դրդված՝ եկել են տեսնելու, թե ինչ է կատարվում: Ի վերջո, տեսնում են, որ քաղաքապետարանի մոտ ինչ-որ աժիոտաժ կա, ի դեպ, աժիոտաժն էլ ապահովել է ոստիկանների այդքան մեծաքանակ լինելը: Ով եկել, դիմացները կանգնել է կամ ով փորձել է խնդրել, որ ընկերոջը բերման չենթարկեն, ինքներցիայի ուժով բոլորին տարել են եւ սկսել են ցուցմունքներ նկարել: Այստեղ ինչն է կարեւոր. ասում են՝ արդարադատությանը միջամտել եք, որ իբրեւ Վարդան Ղուկասյանին չձերբակալենք, բայց պարոն Ղուկասյանն այդ ժամին գրեթե հասնում էր Երեւան, մարդիկ էլ այդ մասին գիտեին: Սրանով ուզում են հասկացնել, որ հանկարծ որեւէ մեկը չփորձի ինչ-որ բանից դժգոհել: Ուզում են ասել՝ չեղած բանից այսքան մարդու կալանավորեցինք, հանկարծ փորձեք շարունակել՝ կտեսնեք, թե ինչ կանենք ձեզ: Գյումրեցիների մեջ կա վիրավորվածություն, դժգոհություն, որն ինչ-որ ձեւով արտահայտվելու է, բայց ոչ հակաօրինական ձեւով, զուտ դիրքորոշման առումով՝ ընտրությունների ժամանակ եւ այլն: Ես կարծում եմ, որ չէր կարելի ամեն երեխայի բերման ենթարկել, նույնիսկ ծերունու՝ 70-ն անց, բերման են ենթարկել»,- ասում է փաստաբանը: Անգամ դեպք է եղել, որ Սայաթ-Նովայի փողոցում ոստիկանները կանգնեցրել են, այնինչ այդ փողոցը քաղաքապետարանից բավականին հեռու է, ասել են՝ ո՞նց որ թե դու ցույցի ես գնում, ու տարել են կալանքի: «Դեմքից հասկացել են, որ երեւի թե անձը գնում է ցույցի, տանենք: Քանակ են դրել, ինչքան հնարավոր է՝ շատ: Գյումրեցիները մի քիչ հումորով են, ձերբակալման վայրերում տեղերը չէին հերիքում, տանում էին Արտաշատ, Ալավերդի, Վանաձոր, ծնողներն ասում էին՝ ծանոթ կա՞մ, մարդ մեջ գցենք, մեր երեխեքին հանկարծ Քարվաճառ չտանեն: Մի երկու հոգու էլ մոռացել էին ու թողել Արտաշատի ՁՊՎ-ում: Այնքան շատ են եղել, որ 6 հոգու մեղադրանք են առաջադրել, բայց ճանապարհին հաշվել են, նկատել են, որ մեկին մոռացել են ՁՊՎ-ում»,- շեշտեց Հայրապետյանը: Կալանքի ենթարկվածները հիմնականում ընտանիք պահող մարդիկ են, սակայն փաստաբանը նշում է՝ ցավոք, դա ոչ ոքի չի հուզում:

ԽՈՍՏՈՒՄ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ՝ A PROMISE IS MADE TO BE BROKEN

Ինչեւ առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա… Էշ մի սատկի, գարուն կգա, обещанного три года ждут… Անգլիացիները շատ ավելի պրագմատիկ են այս հարցում: Նրանք այլաբանությունների մեջ չեն ընկնում, ուղղակի շրխկացնում են ճակատիդ՝ A promise is made to be broken. հայերենով՝ խոստումը խախտելու համար է:

Հիմա տեսնենք, թե ով է խոստում տվել եւ կկատարի՞, արդյոք, իր խոստումը: Այսօր կանդրադառնանք ՀՀ թիվ մեկ խոստում տվողին եւ չկատարողին, այսինքն՝ Նիկոլ Փաշինյանին: Նա այնքան խոստում է տվել ու դրժել, մոռացել, ականջի հետեւ գցել, որ հանրության շրջանում արժանացել է «ստախոս» տիտղոսին: Համաձայնեք, որ դա սազում է նրան: Եթե ինչ-որ մեկը դեռ կասկածում է սրան, առաջարկում եմ հիշել Նիկոլ Փաշինյանի վաղ շրջանի խոստումներից մի քանիսը… Վարչապետը դու ես, վարչապետը դու ես… սրանից հետո պաշտոնյաների դռները քացով եք բացելու եւ մտնեք, նախարարն ո՞ւմ շունն ա, որ ՀՀ քաղաքացու ասածը չանի… Սրանք դեռ ամենաանմեղ խոստումներն են, եւ նա նույնիսկ դրանք չի կատարել: Էլ չեմ խոսում անկախության, ինքնիշխանության, տնտեսության եւ այլ բնագավառներին վերաբերող նրա անկատար խոստումների մասին: Արցախի հետ կապված խոստումների մասին ընդհանրապես չեմ խոսում: Խաղաղություն, փոխադարձություն Ադրբեջանի հետ… Մոռացեք, չի լինելու ո՛չ մեկը, ո՛չ մյուսը: Թուրքերը լցվելու են Հայաստան, ոչ մի հայ չի լինելու ո՛չ Ադրբեջանում եւ ո՛չ էլ Արցախում: Հայեր ջան, «Զանգեզուրի միջանցքով» դուք ոչ մի տեղ էլ չեք գնալու: Խաբել է:

Գանք օրվա խոստումին՝ Վեհարանն ազատելու եմ Վեհափառից: Եթե մտածեի, որ լուրջ է ասում, կասեի՝ գլուխդ պատն ես տալու: Բայց քանի որ գիտեմ՝ դա հերթական փչոցն է եւ կլոունադան, ուղղակի ժպտում եմ: Ինքզինքն այդ «գործի» առաջնորդ է կարգել… Սա արդեն լիուլի բավարար է՝ հասկանալու, որ նրա այս «նախաձեռնությունը» տապալված է: Խնդիրն այն չէ՝ կկարողանամ հասնել իր «մուրազին», թե՞ ոչ: Խնդիրն այն է, որ նա կարող է իր այս ձեռնարկը մեր գլխին դարձնել մի իսկական էշի հարսանիք: Տեսեք՝ ինչ պայման է դրել. ես կարշավեմ Սուրբ Էջմիածին, երբ բավականաչափ մաքրված լինեմ մեղքերից: Այս պայմանը հասկանալու համար պետք է առնվազն իմանալ նրա գործած մեղքերի չափն ու կշիռը, այնպես չէ՞: Հետեւաբար, պարզ հարց է առաջանում՝ իսկ դու ե՞րբ բավականաչափ մաքրված կլինես քո գործած մեղքերից: Որքան ինձ հայտնի է, մարդուն տրված չէ՝ դատել իր մեղքերի մասին, որոշել՝ դրանց որ մասն է քավել, որ մասից է մաքրվել եւ դեռ որ մասի տակ մնացել: Դա որոշվում է այնտեղ՝ երկնքում, ամենատես Աստծու կողմից: Ու դա է պատճառը, որ հոգեհանգստի ժամանակ տեր հայրերը դիմում են Բարձրյալին, որ նա այդ հանգուցյալ ծառայի հոգին խնամակալության հանձնի իր աջակողմյան հրեշտակներին, այսինքն՝ ների հանգուցյալի դեռեւս չներված մեղքերը եւս: Իսկ եթե ավելի առարկայացնենք այս ամենը, երբ բավականաչափ մաքրված կլինի դրանցից: Ինձ որ մնա, կասեմ, որ նա ամեն օր եւ հատկապես ամեն կիրակի մի նոր մեղք է գործում:

Մեր մեղավոր աշխարհի դրվածքն այնպիսին է, որ մարդն ամեն օր մի նոր մեղք է գործում: Չէի ասի՝ դիտավորյալ է դա անում: Մենք հաճախ մեղք ենք գործում նաեւ ակամա, երբեմն՝ անսպասելի, հանկարծակի, առանց հասկանալու… Ես, օրինակ, ամեն Աստծու օր արթնանում եմ պարեկային ծառայությանը քֆուր-բյաֆար անելով: Աղբատար մեքենայի վարորդին այնքան չեմ քրֆում, ինչքան պարեկների հրամանատարությանը: Հայհոյելը մե՞ղք է, թե՞ չէ: Բայց, մյուս կողմից էլ, ինչո՞ւ պետք է ես ամեն օր արթնանամ Աճառյան-Ծարավ աղբյուր խաչմերուկի պարեկների սուլոցներից: Մեղքերս իբր քիչ էին, Ծարավ աղբյուրում էլ մի ՔՊ-ական «շիշկա» է բնակություն հաստատել: Պարեկները, հասկանում ես, կանաչ լույսի տակ կանգնեցնում են ողջ հոսքը, որպեսզի էս «շիշկան» Ծարավ աղբյուրից գա եւ իր պադավատով, ոստիկանական մեքենայի ուղեկցությամբ, մտնի Աճառյան փողոց… Ու սկսվում է… Մե սիգնալ, մե վայնասուն, մարդիկ, կանաչ լույսի տակ կանգնած, ուշանում են, նյարդայնանում, քրֆում: Ամեն օր քանի՞ մարդ է ինձ նման մեղք գործում, կարո՞ղ եք հաշվել: Նիկոլն ասում է՝ կառավարությունը ես եմ: Այդ «շիշկան» էլ, երեւի, կառավարության անդամ է եւ մեղք է գործում, խախտում հասարակական կարգը: Դա չի՞ նշանակում, արդյոք, որ ամեն օր սեփական կորտեժով հասարակական կարգը խախտող Նիկոլի մեղքերին նոր մեղք է ավելացնում: Եվ այս իրավիճակում Նիկոլը պատրաստվում է «բավականաչափ» մաքրվե՞լ իր մեղքերից: Երեւանում քանի՞ խաչմերուկ կա, հը՞… Որ ամեն խաչմերուկում այդքան մեղք գործի ու այդքան մարդու ստիպի հայհոյել, մեղքից մաքրվելու գործընթացն ինչքա՞ն կտեւի, հը՞… Մարդու կյանքն էլ ի՞նչ է, մի թիթեռի կյանք՝ մեղքի մեջ կորած այս աշխարհում:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄ

Պետական կառավարման մարմինների աշխատողների հետ հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանի արտասանած ճառի վերաբերյալ բազմաթիվ մեկնաբանություններ են հնչել. նա այլեւս կորցրել է հանրային վստահության ռեսուրսը եւ ստիպված է ելույթ ունենալ մի լսարանի առաջ, որը պարտադրված է ներկա լինել եւ լսել նրան, այլապես կզրկվի աշխատանքից: Խոսելով ընտրություններից հետո Սահմանադրության փոփոխության հանրաքվե անցկացնելու իր մտադրության մասին, նա ուղերձ է հղում Թուրքիային եւ Ադրբեջանին, որ պետք չէ իրեն հիմա խանգարել վերարտադրվել, որ եթե ինքն ընտրություններում հաղթի եւ պահի իշխանությունը, դրանից անմիջապես հետո կանցնի նրանց պահանջների բավարարմանը՝ Սահմանադրության փոփոխությանը եւ այնպիսի Սահմանադրության ընդունմանը, որը միանգամայն կբավարարի Ադրբեջանին եւ Թուրքիային: Սակայն Փաշինյանն այդ ելույթում ներկայացրեց ավելի կարեւոր բան՝ ապագա Հայաստանի իր տեսլականը՝ թուրքական հպատակություն, որը կապահովի երաշխավորված պաշտոնավարում բանաձեւով: Նա հավաքել էր պետական կառավարման մարմինների աշխատողներին՝ ասելու, որ դրա շահառուն միայն ես չեմ, այլ՝ բոլորս միասին, նաեւ դուք՝ դահլիճում նստածներդ: Ովքեր համաձայն են կյանքի կոչել իմ առաջարկած բանաձեւը՝ աջակցելով ինձ թուրքական հպատակության հարցում, կստանան երաշխավորված պաշտոնավարում:

Փաշինյանն իր ելույթում խոսեց այն մասին, որ պետք է իրականացնել ոչ թե սահմանադրական փոփոխություններ, այլ ընդունել նոր Սահմանադրություն, եւ ներկայացրեց տափակ ու ոչինչ չասող հիմնավորումներ: Այդ սիրուն բառերն ու ձեւակերպումները ջուր են, բոլորի համար պարզ է, որ նոր Սահմանադրության պահանջը ներքին չէ, դա չի գալիս հայ հասարակությունից, հայ հասարակությունը նոր սահմանադրության ընդունման պահանջ չի դրել, որովհետեւ ներկայիս Սահմանադրությունը նորմալ գործում է, այն չի առաջացնում այնպիսի սահմանադրական ճգնաժամեր, որոնք անլուծելի կամ անհաղթահարելի են, եւ անհրաժեշտություն է առաջացել ընդունել նորը, որը կհամապատասխանի նոր իրողություններին: Որեւէ մեկի մոտ կասկած չկա, այդ թվում եւ իշխանության ներկայացուցիչների, որ Սահմանադրության փոփոխության պահանջը դրված է Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից, որ դրանով այդ երկրները լուծում են ոչ այնքան Արցախից եւ ցեղասպանության միջազգային ճանաչումից Հայաստանի պետության հրաժարվելու հարցը, որքան դառնում են Հայաստանի ներքաղաքական օրակարգի թելադրողը, հայ հասարակությանը հասկացնում են, որ այսուհետ շարժվելու եք մեր թելադրանքով, նոր Սահմանադրության ընդունումը նշանակում է թուրքական հպատակության ընդունում:

«Նոր սահմանադրությունը պետք է լուծի մեկ այլ, թույլ տվեք ասել՝ ինժեներական խնդիր, պայմանականորեն: Սահմանադրությունը պետք է ապահովի պետության երկարաժամկետ ընթացքի աերոդինամիկան, էլի պայմանականորեն: Եվ աերոդինամիկան կարող է տուժել, եթե պատկերացումը հստակ, միասնական չլինի, թե ինչ ենք ուզում մենք ունենալ արդյունքում»,- պետական ապարատի ծառայողների առջեւ ունեցած ելույթում ասել է Փաշինյանը: Քանի որ նա արդեն հայտարարել է, որ կառավարությունն ինքն է, ապա պետություն ասելով՝ նկատի ունի հենց պետական կառավարման մարմինների աշխատողներին, խոսելով պետության հարատեւության մասին՝ նա այդ մարդկանց ասում է, որ եթե դուք ուզում եք հարատեւ-երկարաժամկետ պաշտոնավարում, ապա պետք է ինձ աջակցեք Սահմանադրության փոփոխության՝ Հայաստանի թուրքական հպատակեցման հարցում: Ի՞նչ նկատի ունի Փաշինյանն աերոդինամիկա ասելով. այն դիմադրությունը, որը կարող է առաջանալ իր նախանշած նպատակին հասնելու ճանապարհին: Նա ասում է, որ հանրային դիմադրությունը հաղթահարելու՝ դիմադրության գործակիցը չեզոքացնելու կամ հնարավորինս մեղմելու համար իրենց պետք է միասնականություն, իրենք պետք է ունենան միասնական պատկերացում, որպեսզի հնարավորինս հեշտ հաղթահարեն այդ դիմադրությունը:

Փաշինյանը գիտի, որ պետական կառավարման մարմիններում, աշխատողների մոտ եւս միասնական տեսակետ չկա Հայաստանի թուրքական հպատակեցման հարցում, այդ մարդկանց մեծամասնությունն անընդունելի է համարում թուրքական հպատակեցումը, դա նրանց ուղղակի պետք չէ, նրանք չգիտեն, թե ինչ է տալիս դա իրենց, այդ մարդկանց հետաքրքրում են միայն իրենց պաշտոնը եւ դրանից բխող ազդեցությունն ու եկամուտը: Փաշինյանը նրանց ասում է. ես 2026-ին ոստիկանական տեռորի՝ մարդկանց կալանավորելու, բռնության եւ կեղծիքի միջոցով նախ կապահովեմ իշխանության վերարտադրությունը, դրանից դուք կօգտվեք, քանի որ կպահեք ձեր իշխանությունը, բայց դրանից հետո էլ դուք պետք է ինձ աջակցեք՝ անցկացնելու նոր սահմանադրությունը, եւ եթե այս ամենը կարողանանք միասին անել, հաշվեք, որ ապահովել ենք մեր պաշտոնավարելու հարատեւությունը:

Փաշինյանը ոչ միայն փոխշահավետ գործարք է առաջարկում, այլեւ փորձում է ցրել այն կասկածները, թե իրեն չի հաջողվելու պահել իշխանությունը, նա համոզում է, որ իշխանությունը կորցնելու վտանգ գոյություն չունի, պետք չէ տարբեր տեղերում նոր հովանավորներ կամ տանիքներ փնտրել, պետք է միասնականություն դրսեւորել, եւ ամեն ինչ լավ կլինի: Քանի՞ մարդ է նրան հավատում, քանի՞սն է ուզում նրա հետ ձեռք-ձեռքի տված՝ թռչել անդունդը, դժվար է ասել:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՈՉ ԹԵ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ», ԱՅԼ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԽՈՐՏԱԿՄԱՆ ԿԱՄՈՒՐՋ»

ՀՅԴ

Վերջին շրջանում Հայաստանի եւ Ադրբեջանի շփումներում ակտիվ դինամիկա կա, բնականաբար՝ հայկական կողմի անարժանապատիվ ջանքերի ու Բաքվին «տրվելու» անհագուրդ ցանկությամբ լի: «Քայլ արա» կարգախոսով իշխանության եկած ՔՊ-ական ռեժիմը հիմա էլ որոշել է քայլ անել «խաղաղության» ուղղությամբ, բայց դրանք ոչ այնքան քայլեր են, որքան տեղապտույտ՝ սատանայի անիվի ռեժիմով:

Մտաբերենք այդ շփումների, որոշ իմաստով՝ ստորացուցիչ, երբեմն՝ վտանգավոր ժամանակագրությունը: Հոկտեմբերի 22-ին ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն ընդունեց Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների երեւանյան կլոր-սեղանի մասնակիցներին եւ նշեց. «Բարձր եմ գնահատել Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակներում նման ձեւաչափն ընդգրկող հանդիպումների անցկացումը, որոնք միտված են՝ դրական ազդելու մարդկանց միջեւ շփումների հաստատմանը: Ընդգծել եմ, որ հանրության տարբեր շերտերի ներգրավումը միմիայն ամրապնդելու է խաղաղությունը: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն իրենց հերթին շնորհակալություն են հայտնել հայկական կողմին՝ միջոցառումը կազմակերպելու եւ դրական մթնոլորտ ապահովելու համար: Մասնակիցներն ընդգծել են նման նախաձեռնությունների շարունակականության կարեւորությունը՝ ուղղված փոխվստահության եւ համագործակցության ամրապնդմանը: Հանդիպման երկրորդ մասում պատասխանել եմ ներկաների հարցերին»:

Ըստ ժամանակագրության, հիշենք նաեւ, որ նոյեմբերի 17-19-ը Ստամբուլում կայացավ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի աշնանային 23-րդ նստաշրջանը, որի շրջանակում հանդիպում ունեցան Հայաստանի եւ Ադրբեջանի պատվիրակությունները: Հայկական կողմի խոսույթը, ինչպես միշտ, «սիրառատ» էր ու պաթետիկ: Աժ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանն ասել էր. «Առաջին անգամ այս վեհաժողովի պատմության մեջ հանդիպման պայմանավորվածությունը ձեռք էր բերվել Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարանների ղեկավարների՝ Ժնեւում վերջերս կայացած հանդիպման ժամանակ, քննարկեցինք եւ ողջունեցինք ձեռք բերված խաղաղությունը, նաեւ քննարկեցինք 2 խորհրդարանների միջեւ հնարավոր համագործակցության հարցեր, ինչպես երկու ֆորմատներում, այնպես էլ բազմակողմ հարթակներում, եւ հույս հայտնեցինք, որ այն խնդիրները, որոնք շարունակում են մնալ խնդրահարույց, այդ թվում եւ հումանիտար, շուտով կհասցեագրվեն»: Թե ինչ խաղաղություն են ձեռք բերել, որ մենք չենք տեսնում, եւ մարդասիրական խնդիրների ներքո ինչ կամ ում նկատի ունեն՝ Բաքվի բանտերում անմարդկային պայմաններում տառապող Արցախի ռազմաքաղաքական նախկին ղեկավարներին ու մյուս հայ ռազմագերիներին: Կամ՝ ո՞ւմ են այս խոսքերը հասցեագրում՝ մարդատյաց, հայատյաց, մարդասպան Ալիեւին: Եվ ովքե՞ր են խոսում մարդասիրությունից, Արցախը հանձնած, արցախահայության արդար իրավունքները մեր խաղաղության ու ինքնիշխանության համար «վտանգ» համարող իշխանության ներկայացուցիչնե՞ը:

Վերադառնանք քաղհասարակությանը: «Խաղաղության կամուրջ» նախաձեռնության շրջանակում 2025թ. նոյեմբերի 21-22-ին Ադրբեջան է այցելել Հայաստանի քաղհասարակության ներկայացուցիչների խումբը: «Հանդիպման ընթացքում քննարկվել են Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղ գործընթացի դինամիկան, քաղաքացիական հասարակության դերը երկխոսության խթանման գործում, համատեղ նախագծերի իրականացման հեռանկարները: Անդրադարձ է եղել նաեւ խաղաղության գործընթացի վերաբերյալ այն ակտուալ թեմաներին, որոնք հուզում են Ադրբեջանի եւ Հայաստանի հասարակություններին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ մեդիա ոլորտում համատեղ աշխատանքի ակտիվացման, փորձագիտական խմբերի միջեւ ուղիղ կապերի հաստատման եւ խաղաղության գործընթացում քաղաքացիական հասարակությունների շարունակական ներգրավվածության վերաբերյալ: Կողմերը համաձայնել են շարունակել աշխատանքային շփումները եւ «Խաղաղության կամուրջ» նախաձեռնության շրջանակում պլանավորել հետագա այցերը Հայաստան եւ Ադրբեջան: Այցի շրջանակում տեղի է ունեցել նախաձեռնության անդամների հանդիպումն Ադրբեջանի նախագահի օգնական, նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքականության բաժնի ղեկավար Հիքմեթ Հաջիեւի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են վաշինգտոնյան հանդիպումից հետո Ադրբեջանի եւ Հայաստանի կողմից ձեռնարկված քայլերը խաղաղության օրակարգի ամրապնդման ուղղությամբ»,- ասվում է նախաձեռնության հաղորդագրության մեջ:

Հիմա հարց. ադրբեջանցիներին պաշտոնական Երեւանն ընդունում է առանձնահատուկ՝ ԱԽ քարտուղարի մակարդակով, իսկ Բաքվում հայերին հանդիպում է Ալիեւի օգնականը: Նախագահի օգնականի կարգավիճակը համարժեք չէ ԱԽ քարտուղարի կարգավիճակին: Իսկ ի՞նչ են գրում ադրբեջանական ԶԼՄ-ներն այս այցի մասին. կամ կցկտուր ու տրաֆարետային տեքստեր, կամ լռում են: Ահա. «Պաշտոնական մասից բացի, կազմակերպվել էր նաեւ մշակութային ծրագիր: Հայ հյուրերն այցելել են Բուսաբանական այգի, Իչերիշեհեր, Շիրվանշահերի պալատ, Կույսի աշտարակ, Ծովափնյա բուլվար, Նիզամի փողոց, տիկնիկային թատրոն եւ Փոքր Վենետիկ: Հաջորդ օրը նրանք այցելել են Աղ Շեհեր եւ շրջել Հեյդար Ալիեւի կենտրոնում՝ ուսումնասիրելով դրա մշտական եւ ժամանակավոր ցուցադրությունները: Մշակութային ծրագիրը մեծ հետաքրքրություն է առաջացրել հայկական պատվիրակության շրջանում եւ դարձել է այցի կարեւոր բաղադրիչ»:

Այսինքն՝ մերոնք հմայվել են Արցախին ու Հայաստանին «թիվ մեկ թշնամի համարող» Ալիեւի ոչ պակաս հայատյաց հոր՝ Հեյդարի թանգարանով եւ ադրբեջանական տեսարժան վայրերով էքսկուրսիա են գնացել....

Իսկ հիմա՝ այս քաղաքական եւ տեղեկատվական նվաստացուցիչ «ապտակի» կիզակետը: «Հրապարակը» լրագրողական հետաքննություն էր իրականացրել՝ անդրադառնալով Երեւանում նոյեմբերի 4-6-ը տեղի ունեցած «Օրբելի ֆորում 2025»-ին, որին ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի կենտրոնը հրավիրել էր նաեւ Ադրբեջանի պետական Azertac լրատվամիջոցից ներկայացուցիչներին: Հայաստան էին եկել 2 ադրբեջանցի լրագրող, որոնց ծախսերը հոգացել է հայկական կողմը: Այս փաստը հաստատել էր ՊՈԱԿ-ի աշխատակիցը: Ապա ուսումնասիրել էինք Azertac առցանց լրատվամիջոցը՝ հասկանալու, թե այցի շրջանակներում ինչ նյութեր են հրապարակվել ֆորումի եւ Հայաստանի կամ Հայաստանում գտնվելու օրերի մասին: Պարզվում է՝ լրատվամիջոցը որեւէ նյութ չի հրապարակել «Օրբելի ֆորում 2025»-ի մասին, որի բանախոսներից երկուսն ադրբեջանցի էին, անգամ նրանց ելույթները չեն լուսաբանել: Նոյեմբերի 3-7-ը Հայաստանին կամ հայերին վերաբերող միակ հրապարակումը եղել է հայ գերիների կեղծ դատավարության եւ 2 կարճ լուր Ադրբեջանի տարածքով ղազախական ցորենի՝ Հայաստան տեղափոխման մասին: Իսկ գլխավոր թեման 44-օրյա պատերազմին նվիրված Բաքվի զորահանդեսն ու այդ թեմայով Արցախում անցկացվող միջոցառումներն էին:

Հիմա տրամաբանական հարց. ինչո՞ւ էին ադրբեջանցիները եկել Հայաստան, ու ինչո՞ւ էր գաղտնի պահվում նրանց այցը: Ինչո՞ւ էր հայկական կողմը նրանց տեղավորել Երեւանի ամենաթանկ հյուրանոցներից մեկում եւ անվտանգության աշխատակիցներ տրամադրել, իսկ այցելության ծախսերն էլ հոգացել ՀՀ պետբյուջեի միջոցների հաշվին: Իրականում, սրանք ոչ թե հարցեր են, այլ՝ ցավալի փաստագրումներ, որոնք շարունակելի են:

Էջը՝ Արա ԱԼՈՅԱՆԻ

ՈՐԵՎԷ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՉԻ ՍՏՈՐԱԳՐԻ ԱՅԴ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

«Հրապարակի» զրուցակիցն ուկրաինացի քաղաքագետ **Եվգենի Մագդան** է:

- Զելենսկին դիմեց ուկրաինացիներին եւ խոստովանեց, որ երկրի պատմության մեջ ամենադժվարին ընտրության առջեւ եք, այժմ երկրի վրա ուժեղ ճնշումներ են գործադրվում, եւ հիմնական գործընկերոջը՝ ԱՄՆ-ին կորցնելու ռիսկ կա: Ո՞վ է ճնշում, հենց Վաշինգտո՞նը:

- Ինչպես պարզ դարձավ, 28 կետերը Կրեմլի նախաձեռնությունն են, որը նրանք որոշել են առաջ մղել Թրամփի թիմի մի մասի միջոցով՝ շահագործելով նոր դիվանագիտական հաղթանակների նկատմամբ ԱՄՆ նախագահի շահագրգռվածությունը եւ Զելենսկու թիմի թուլությունը՝ կոռուպցիոն սկանդալի պատճառով: Իր ներկայիս տեսքով ո՛չ Զելենսկին, ո՛չ էլ երկրի ապագայի մասին մտածող որեւէ ուկրաինացի քաղաքական գործիչ չի ստորագրի այս փաստաթուղթը:

- Զելենսկին նաեւ նշել է, որ ուկրաինացիները «պողպատից են, բայց նույնիսկ ամենաամուր մետաղը կարող է կոտրվել»: Իսկապե՞ս իրավիճակն այդքան օրհասական է:

- Ուկրաինայի նախագահը կարող է ավելի լավ իմանալ, բայց նման ամբարտավան հայտարարությունները չեն արտացոլում հասարակության մեջ տիրող իրավիճակը: Ուկրաինացիները չունեն կապիտուլյացիայի մտադրություն: Սա շատերի համար ակնհայտ է:

- Բացի այդ, նա քաղաքական ուժերին կոչ է արել՝ դադարեցնել ներքին պայքարը եւ միավորվել: Կոռուպցիոն խայտառակ սկանդալի ֆոնին, որտեղ հենց նախագահի մերձավորներն են ներգրավված, դա ինչպե՞ս է ընկալվում Ուկրաինայի հասարակության կողմից:

- Այսօր Ուկրաինայում ակտիվ քաղաքական պայքար չկա. կան անկախությունից ի վեր ամենամեծ կոռուպցիոն սկանդալի հետեւանքներ: Պատերազմի ժամանակ համաքաղաքացիներից գողանալը դիակապտություն է, եւ կարծում եմ, որ Ուկրաինայի քաղաքացիների մեծ մասն այդպես է ընկալում դա:

- Զելենսկին նաեւ տեղեկատվական վերահաս ճշնման մասին է ակնարկել. ի՞նչ նկատի ունի, Կրեմլի քարոզչական արշա՞վը:

- Ես ճնշման որեւէ ակնարկ չնկատեցի: Եթե Զելենսկին խոսում է «կրեմլամետ արշավի» մասին, թող նա կրկին լսի Մինդիչի եւ նրա հանցակիցների միջեւ զրույցների ձայնագրությունները, որտեղ նրանք խոսում են «Մոսկվայում գտնվող երկսենյականոց բնակարանի» մասին:

- Թրամփը նշել է, որ Ուկրաինայի համար պատրաստված խաղաղության պլանը կարող է փոփոխվել, բայց վերջնարդյունքը պետք է լինի խաղաղությունը: Երբ հարցրել են, թե ինչ կլինի, եթե Զելենսկին մերժի, պատասխանել է. «Այդ դեպքում նա կարող է շարունակել պայքարել այնքան, որքան կարող է»: Կա՞մ երկիմաստություն:

- Թրամփը պարզապես սիրում է լողալ փառքի մեջ, նրան քիչ է հետաքրքրում դրա ծագումը: Նրա գործողություններն արդեն իսկ նվազեցրել են Ռուսաստանի՝ որպես ագրեսորի կարգավիճակը, եւ, ինչպես ենթադրում են նրա հայտարարությունները, նա հետաքրքրված է պատերազմի ավարտով, այլ ոչ թե արդար խաղաղությամբ:

- Ուկրաինային ի՞նչ է սպասվում՝ հաշվի առնելով Զելենսկու աննախադեպ հոռետեսությունը, ԵՄ-ի, ԱՄՆ-ի եւ Կիեւի միջեւ նախատեսված խորհրդակցությունները:

- Պատասխանը շատ պարզ է. Ուկրաինան չունի կապիտուլյացիայի ենթարկվելու մտադրություն: Եվ սա պետք է ակնհայտ լինի բոլորին:

ՆՐԱՆՔ ՔԱՂԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ, ԱՅԼ ՔՊ-Ի ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԻԼՀԱՄԻ ԲԱՆԲԵՐՆԵՐ

«Ադրբեջանի համար պատերազմն ավարտվել է». երեկ հայ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ադրբեջանի նախագահի օգնականի ուղերձը փոխանցեց Բաքու այցելած հայկական պատվիրակության անդամ Արեգ Քոչինյանը՝ որպես աչքալուսանք: Նշենք, որ նոյեմբերի 21-ին հայ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները մեկնել էին Բաքու՝ «Ֆլայ Ուան» ավիաընկերության հատուկ չվերթով: Դրանից առաջ ադրբեջանական պատվիրակությունն էր եկել Հայաստան: Հոկտեմբերի վերջին Երեւանում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, Հայաստանի եւ Ադրբեջանի ՀԿ-ների ղեկավարների մասնակցությամբ տեղի էր ունեցել երկկողմ կլոր սեղան, որին մասնակցել էր նաեւ ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը:

«Հայ-ադրբեջանական կոնֆլիկտն իրենց համար այլեւս ավարտված է, չկա: Իրենք ուզում են, որ այս չպատերազմի վիճակի վրա կառուցեն խաղաղություն, եւ իրենք ցանկանում են Հայաստանի հետ համապարփակ ու երկարաժամկետ խաղաղություն կառուցել: Հաջիեւն ասաց, որ Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ որեւէ տարածքային պահանջ չունի: Սա բառացի եւ ուղիղ մեսիջներն էին, որ Ադրբեջանի նախագահի օգնականը խնդրել է փոխանցել հայ հասարակությանը»,- երեկ ասել է Արեգ Քոչինյանը՝ ստանձնելով Հաջիեւի խոսնակի դերը: Քոչինյանը կարեւորել է «կարմիր գծեր» սահմանելն ու դրանից այն կողմ ադրբեջանական կողմի հետ քննարկումներ սկսելը:

Ինչ վերաբերում է իրենց հասցեին հնչած քննադատություններին, քանի որ Ադրբեջան այցը՝ մեր գերիների դատավարության եւ դաժան պատժաչափեր հայտարարելու օրերին շատերն էին քննադատել, Արեգ Քոչինյանն ասում է, թե այսօր հայ-ադրբեջանական, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման դեմ խոսողներն օտարերկրյա գործակալներ են: Հիշեցնենք. Բաքու մեկնած պատվիրակության կազմում էին Արեգ Քոչինյանը, Բորիս Նավասարդյանը, Նաիրա Սուլթանյանը, Նարեկ Մինասյանը եւ Սամվել Մելիքսեթյանը: Այս այցի համար ՀՀ կառավարությունը հատկացրել էր 17 մլն 550 հազար դրամ:

Ռեժիսոր, հասարակական գործիչ **Հովհաննես Իշխանյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով հայտնի անձանց Բաքու կատարած այցին եւ դրա հետեւանքներին, նկատում է. «Նախ պետք է մեր լեզվից առհասարակ հանենք այդ խմբակին քաղհասարակություն անվանելը, նրանք ՔՊ-ի հասարակությունն են, բայց ոչ երբեք հայաստանյան քաղհասարակություն, իսկ Բաքու կատարած այցից հետո արդեն Իլհամի ընտանիքի բանբերի կարգավիճակը ստացան, սակայն այս մարդիկ որեւիցե կերպ առնչություն չունեն քաղհասարակության հետ: Քաղհասարակությունը երբեք չի կարող շարժվել իշխանության օրակարգով, իշխանության թելադրանքով: Քաղհասարակությունը հասարակության որոշակի շերտեր ներկայացնող ինստիտուտ է, իսկ այս մարդիկ Բաքու կատարած այցի շրջանակներում մեր հարկերից 18 մլն դրամ են ծախսել, ՔՊ կուսակցության շռայլությամբ: Այդ այցն ինչի՞ համար էր: Օգոստոսի 8-ին մի սարսափելի փաստաթղթի տակ ստորագրեցին կողմերը, որը ենթադրում էր նման շփումներ: Այդ անձինք ոչ թե գնացել էին Բաքու՝ մեր շահերը ներկայացնելու, ոչ թե նրա համար էին գնացել, որ հայերի իրավունքները ներկայացնեն, ինչպես տեսնում ենք, այս առումով Բորիս Նավասարդյանն անկեղծ է եւ չի էլ թաքցնում, որ ինքը ոչ թե հայերի շահերը պաշտպանելու համար էր գնացել, այլ ուղղակի ալիեւյան՝ Երեւանը գրավելու երազանքները իրականանալու: Արցախն արդեն վաղուց հանձնել են, իսկ հիմա պետք է այդ պրոցեսները լեգիտիմացնեն: Եկեք չմոռանանք, թե այս մարդիկ որ կուսակցության ուղղորդմամբ են մեկնել Բաքու, մի կուսակցության, որն Արցախը ճանաչել է Ադրբեջանի մաս: Նրանց համար եւ Արցախի հանձնումն է նորմալ, եւ հայերի էթնիկ զտումը, եւ հայկական ժառանգության վերացումն է նորմալ, եւ գերիների խոշտանգումներն են նորմալ: Ինչպես տեսնում ենք՝ Վիգենն արդեն չի էլ կարողանում ոտքի վրա կանգնել, մյուս գերիները նույնպես շատ վատ վիճակում են: Ի դեպ, ադրբեջանցիները չեն դադարում միջազգային ատյաններում հայերի դեմ դատական հայցեր ներկայացնել, սա եւս այդ խմբակի համար նորմալ է: Այսքան հանգամանք հաշվի առնելով, այժմ ասեք՝ ինչպե՞ս կարելի է սրանց համարել քաղհասարակություն: Իրական քաղհասարակության համար ուղղակի վիրավորական է այդ ամենը: Հայ ռազմագերիների մասին խոսելիս եւ ակնկալիքների սպասելիս պետք է նաեւ մեկ հանգամանք հիշել: Իշխանություններն արդեն նույնիսկ նրանց գերի չեն անվանում, այլ անազատության մեջ գտնվող անձինք: Եկեք չմոռանանք նաեւ, որ, ըստ Ադրբեջանի, գերիների մասով կա երկու կարգավիճակ: Առաջին կարգավիճակով՝ մարդկանց դատում են ցմահ, մյուսները դատվում են, որովհետեւ պատերազմի ժամանակ գերության մեջ են հայտնվել: Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությանն այս իշխանությունը չի կարող պահանջել, քանի որ Արցախը ճանաչել է Ադրբեջանի մաս եւ, ըստ էության, ընդունել Ադրբեջանի այն վարկածը, որի համաձայն, նրանք՝ բոլորը, ռազմական հանցագործներ են: Եթե այլ պետության մեջ ռազմական խմբեր ես ղեկավարել, նշանակում է, որ ռազմական հանցագործ ես: Ադրբեջանն այսպես է կարծում, այդպես է կարծում նաեւ Փաշինյանի իշխանությունը»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ո՞ՒՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ԵՆ ԹԱՓԱՌՈՂ, ԱՆՏԵՐ ՇՆԵՐԸ

Ասում են՝ շունը մարդու բարեկամն է: Կարծիք կա նաեւ, որ շունը ոչ թե մարդու, այլ իր տիրոջ բարեկամն է ու պաշտպանը, որի հրահանգով կարող է հարձակվել այլ մարդու վրա: Պարբերաբար լսում ենք, որ Հայաստանի տարբեր բնակավայրերում թափառող, անտեր շները հարձակվել են մարդկանց, այդ թվում՝ անչափահասների վրա, նրանց մարմնական վնասվածքներ հասցրել: Տարիներ առաջ Հայաստանի բնակավայրերում թափառող, անտեր շների թիվը նվազեցնելու համար արմատական, սակայն բարբարոսական միջոց էր կիրառվում: Համայնքապետարանը նախապես հայտարարություն էր տարածում բնակիչների շրջանում, որ այսինչ օրը, գիշերվա ժամերին կատարվելու է թափառող շների վնասազերծման գործողություն, բնակիչներին խնդրում էին գիշերային կրակոցներից չանհանգստանալ: Զենք կրելու իրավունք ունեցող, օրինական զենք ունեցողները նշանակված օրը, գիշերը թափառող, անտեր շների որս էին կատարում, դաժանաբար սպանում կենդանիներին: Համայնքապետարանի հետ պայմանավորվածության համաձայն, յուրաքանչյուր անտեր, թափառող շան սպանության համար «որսորդները» նույնիսկ գումար էին ստանում՝ 5 հազար դրամ:

Կյանքը փոխվում է, Հայաստանում թափառող, անտեր շների նկատմամբ վերաբերմունքն էլ է ինչ-որ չափով փոխվել՝ կենդանիներին արդեն գիշերներով չեն գնդակահարում, սակայն թափառող շների հիմնահարցը լուծելու համար հասարակության վերաբերմունքի մեծ փոփոխություն եւ ֆինանսական մեծ ռեսուրսներ են հարկավոր: Թափառող, անտեր շների խնդիրն ուզում եմ դիտարկել Տավուշի մարզկենտրոն Իջեւանի օրինակով: Այս տարվա ամռանը Իջեւանի բնակիչներից դժգոհություններ կային, որ քաղաքի կենտրոնում, Շատրվանների հրապարակում մշտապես գտնվող Ռիժիկ շունը վտանգ է ներկայացնում՝ ագրեսիվ է քաղաքի կենտրոնով անցնող մարդկանց հանդեպ: Իջեւանցիներից ոմանք էլ նշում էին, որ այդ շունը ագրեսիվ է միայն իր հանդեպ ագրեսիվություն ցուցաբերող մարդկանց նկատմամբ: Հուլիսին Ռիժիկին հատուկ մեքենայով Երեւան՝ շների ապաստարան տեղափոխեցին:

Իջեւանում թափառող, անտեր շներն այս տարի երկու անգամ հարձակվել են համայնքի կոմունալ ծառայության հավաքարարների վրա, որոնք առավոտյան վաղ են աշխատանքի դուրս գալիս: Իջեւանի բնակչուհի Ռ. Զ.-ն գրավոր դիմել է համայնքապետարան, որ թափառող, անտեր շունը հարձակվել է իր ձեռքին գտնվող սննդամթերքի փաթեթի վրա: Մարդկանց վրա հարձակման դեպքեր են գրանցվել նաեւ Իջեւան համայնքի Լուսաձոր, Ազատամուտ գյուղերում:

Ռուսաստանի քաղաքացի Սվետլանա Նեկրասովան իր ռուս ամուսնու հետ բնակվում է Իջեւան քաղաքին հարակից Գանձաքար գյուղում, Նեկրասովան Իջեւան քաղաքի մոտակա Գետահովիտ գյուղում «Պրիյուտ» անվանումով ապաստարան է ստեղծել: Նա ինձ հայտնեց, որ թափառող, անտեր շների խնդրի լուծումն ինքը տեսնում է համայնքապետարանի, կենդանասեր կամավորների եւ միջազգային կազմակերպությունների համագործակցված աշխատանքով: Իջեւանցի կենդանասեր Լիլիթ Օքմինյանը, որը երաժշտության ուսուցիչ է աշխատում, մեզ հայտնեց, որ ինքն ամիսներ շարունակ շների համար ճաշ է պատրաստել, տարել Գետահովիտ գյուղում գործող ապաստարան, սակայն Նեկրասովան անհայտ պատճառներով արգելել է իրեն դա անել եւ պահանջել է լքել տարածքը՝ հայտարարելով, որ դա մասնավոր տարածք է, չլքելու դեպքում ինքը ոստիկանություն կկանչի: Լ. Օքմինյանն ասաց նաեւ, որ Նեկրասովան համացանցում փակել է շների ապաստարանի էջը, հավանաբար՝ այն պատճառով, որ մարդիկ չտեսնեն, թե ով ինչքան է հովանավորում, աջակցում այդ ապաստարանին: Իջեւանի բնակչուհի Աիդա Մկրտումյանն էլ մեզ հայտնեց, որ չնայած ինքը սոցիալապես անապահով է, սակայն խանութներից շների համար մակարոնեղեն է գնել, եփել, հարեւաններն էլ սննդով օգնել են, որ ինքը կերակրի թափառող, անտեր շներին: Բայց այժմ իր ընտանեկան նպաստը «կտրել են», ինքը դժվարանում է շների համար սնունդ գնել:

Իջեւանի համայնքապետարանից տեղեկացա, որ համայնքապետարանը մայիսից մինչ հոկտեմբեր կազմակերպել է շուրջ 100 թափառող, անտեր շների ստերջացումը: Համայնքապետարանն ակտիվորեն համագործակցում է Հայաստանի եւ Իջեւանի կենդանասերների հետ: Իջեւանի կոմունալ ծառայության իրավաբան, կենդանասեր Դավիթ Սահակյանը գրեթե ամեն օր զբաղվում է թափառող շների խնդրով, այդ հարցն այս տարի ներկայացրել է նաեւ Տավուշում աշխատող եվրոպացի դիտորդներին: 2026-ին գերմանական աջակցությամբ Իջեւանում թափառող շների ստերջացման ծրագիր կիրականացվի: Հույս կա, որ իրավիճակը կփոխվի՝ ո՛չ մարդիկ կտուժեն, ո՛չ կենդանիները:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉՈՒ Է ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐ ԹԻՄԱ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն առաջարկել է ուկրաինական հակամարտության կարգավորման սկզբունքորեն նոր պլան: Իր այս քայլով, ինչպես նշում են փորձագետները, Թրամփը

հերթական անգամ զարմացրել է բոլորին, թե որքան համառ ու հետեւողական կարող է լինել իր նախաձեռնություններում: Սա՝ այն դեպքում, երբ դեռ նոյեմբերի սկզբին ակնհայտ էր, որ Սպիտակ տան ղեկավարի՝ ուկրաինական կարգավորման ուղղությամբ ներդրած միջնորդական ջանքերն անարդյունավետ են եւ անհեռանկար: Ռուսաստանի դեմ նոր սանկցիաների սահմանումից ու Թրամփի հայտարարություններում սպառնալից տոնայնության ավելացումից կարելի էր հասկանալ, թերեւս, որ ինչ-որ նոր բան նա առաջարկելու է: Որպես կոշտ բանակցող՝ Թրամփը միշտ հավատարիմ է եղել իր մեթոդին: Եվ այնուամենայնիվ, իրականությունն այն է, որ մեկ ամիս շարունակ Թրամփի հավատարիմ գործակիցներից հատուկ դեսպանորդ Սթիվ Վիթքոֆը, որը նաեւ մերձավորարեւելյան կարգավորման պլանի հեղինակն է, Գազայի սեկտորում իրավիճակի կարգավորման պլանի հիման վրա մշակել է ուկրաինական կարգավորման նոր առաջարկներ: Թեեւ ռուսական լիբերալներն ու ուկրաինացի փորձագետները Վիթքոֆին մեղադրում են նրանում, որ դիվանագիտությունից ոչինչ չի հասկանում, սակայն Թրամփի հավատարիմ ու մերձավոր զինակիցը լինելուց բացի, նա նաեւ նրա վարչակազմում ամենաիրատես աշխատակիցն է: Ու դա սոսկ խոսքեր չեն: Նա էր Մոսկվա այցելած ամերիկացի բարձրաստիճան ներկայացուցիչը՝ Պուտին-Թրամփ՝ Անքորիջյան հանդիպումից առաջ, եւ ասում են, որ նաեւ նրա ջանքերի գնով է, որ Անքորիջյան հանդիպումը երկու լիդերների միջեւ կայացավ: Հետաքրքրական է այն, որ Թրամփը, կորցնելով այս տարվա խաղաղության նոբելյան մրցանակ ստանալու հնարավորությունը, չի ընկրկում ու շարունակում է աշխատանքները՝ ուկրաինական հակամարտության կարգավորմանը հասնելու ուղղությամբ: Թե ինչու, բացատրությունը շատ պարզ է: Նա ցանկանում է պայմանավորվել ռուսների հետ: Ու քանի որ նախկինում կատարված անհաջող փորձերից կարողացել է ճիշտ դասեր քաղել, հիմա գտել է «ոսկե միջինը» ու դա է առաջ մղում: Բացի այդ, նա լավ է հասկանում, որ ուկրաինական կողմն օրեցօր ուժասպառ է լինում: Դրա համար անհրաժեշտ է փրկել ուկրաինական պետականության ու բանակի փշրանքները:

Թրամփը ճիշտ է հասկանում իրականությունը՝ գործարքը որքան ուշանա, այնքան ավելի վատ է լինելու Ուկրաինայի համար: Այս ամենը, ինչպես ասում են, արտաքին ճակատի հետ կապված հարցեր են: Սակայն կան նաեւ հարցեր, որոնք ներքին ճակատի հետ են կապված: Ներամերիկյան քաղաքական կյանքում ամեն բան չէ, որ հանգիստ է: Սկանդալային ֆինանսիստ Էփշտեյնի գործով նոր տեղեկությունների ի հայտ գալը Թրամփի համար դառնում է ավելի խնդրահարույց: Իսկ առջեւում Կոնգրեսի միջանկյալ ընտրություններն են: Թրամփին պարզապես անհրաժեշտ է, որ հասարակության ուշադրությունը ներքաղաքական խնդիրներից շեղվի ու կենտրոնանա արտաքին քաղաքականության վրա: Թերեւս նաեւ սրանով է պայմանավորված, որ նա հաճախակի է սկսել խոսել Վենեսուելայում գործողություն իրականացնելու մասին: Եվ, ի վերջո՝ Թրամփը պետք է ապացուցի, որ չէր ստում, երբ ասում էր, որ կկարողանա դադարեցնել ուկրաինական հակամարտությանը:

Ռուսաստանի պարագայում հասկանալի է ամեն բան: Ռազմաճակատում կա նկատելի հաջողություն, սակայն պատերազմը ձգձգվում է, ու տնտեսության վրա բեռը մեծանում է, հաշվի առնելով նաեւ հակառուսական՝ հետզհետե խստացող սանկցիաները: Ուկրաինայի եւ անձամբ Զելենսկու վիճակն ավելի նուրբ է ու բարդ: Կոռուպցիոն սկանդալը սպառնալիք է դառնում աստիճանաբար Զելենսկու եւ թիմի համար: Թիմի անդամներից Երմակին ու Ումերովին դատական հետապնդում է սպառնում: Զելենսկու վարկանիշը չափազանց ընկած է: Ու այս իրավիճակում ինչ-որ բան պետք է անել, որ գոնե պատերազմը դադարեցվի, ու հակամարտությունը կարգավորվի: Հակառակ դեպքում՝ Թրամփը կարող է խիստ դժգոհ մնալ Կիեւից, եթե ուկրաինական կողմն այս անգամ էլ խափանի գործընթացը, քանի որ դրանով հարված կհասցվի Թրամփի թե՛ միջազգային, թե՛ ներամերիկյան վարկանիշին: Իսկ դա Սպիտակ տան ներկայիս ադմինիստրացիայի համար խիստ ցանկալի չէ:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 25.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է՝ ՃԱՆՐ ՏԱՐԻ Է ՍՊԱՍՎՈՒՄ



Հայկա ԱԼՈՅԱՆ

Ողջ աշխարհը քննարկում է Թրամփի ներկայացրած նոր պլանը՝ Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ խաղաղություն հաստատելու մասին: Այդ պլանով ԱՄՆ-ն ճանաչելու է ոչ միայն Դոնբասի ռուսական լինելը, այլեւ հարակից տարածքների, այսինքն՝ Ռուսաստանի վերահսկողության տակ է անցնելու Լյուբսեմբուրգի չափ տարածք: Քաղաքական մեկնաբաններն արդեն իսկ շտապում են այս պլանը պրոռուսական անվանել, իսկ Ուկրաինայի համար՝ կապիտուլյացիոն: Միջազգայնագետ, քաղաքական վերլուծաբան **Դավիթ Կարապետյանը** մեզ հետ զրույցում նկատում է, որ 28 կետով ներկայացված, այսպես կոչված, խաղաղության մակետը ենթակա է լրացման, քանի որ Թրամփն ամենօրյա ռեժիմով խոսում է նոր պահանջների, նոր պայմանների, ինչ-որ տեղ՝ նաեւ ուլտիմատային պահանջների մասին:

«Այդ 28 կետից բաղկացած խաղաղության ծրագրի մասին տեղեկատվությունը եղել է Զելենսկու՝ Անկարա այցի ֆոնին: Դոնալդ Թրամփն օրվա առաջին մասը նվիրում է՝ 28 կետանոց խաղաղության պայմանագրի տեքստ է գրում, որով, ըստ նրա, պատերազմը պետք է կանգ առնի, ժամեր են անցնում՝ հայտարարում է, որ Ուկրաինան անխուսափելիորեն կորցնելու է Դոնբասի մնացած հատվածը: Իրարամերժ հայտարարություններ են: Նույն Թրամփը մեկ ժամ անց հայտարարում է՝ կարծում եմ, Ուկրաինան պետք է արագացնի խաղաղության պլանի վերաբերյալ որոշման հարցում, որովհետեւ ցուրտ ձմեռ է սպասվում, եթե Զելենսկուն դուր չի գալիս մեր խաղաղության պլանը, թող շարունակի կռվել: Ուլտիմատումային լեզու է»,- ասաց Կարապետյանը: Ըստ էության, Թրամփի համար գերխնդիր է, եւ իր պատկերացրած սցենարներով՝ վերջնարդյունքը կլինի այն, որ Դոնբասն ամբողջությամբ կռուսիֆիկացվի: Մի բան հստակ է, որ Թրամփն ուզում է իր խաղաղասիրության, կոնֆլիկտների հանգուցալուծման հարցում իր դերը պահպանել, խանդի տեսարաններ է նաեւ ցուցադրում, քանի որ խաղաղության պայմանագիրն ու խաղաղությունը հաստատվել են բացառապես պաշտոնական Վաշինգտոնի եւ իր մասնակցությամբ, ու այս ամենի ֆոնին դրանց թերահավատ է վերաբերվում Զելենսկին՝ Թուրքիա մեկնելով:

«Խանդի տեսարաններով են վերաբերվում այլ աշխարհաքաղաքական վայրում խաղաղության հաստատմանը: Հատկապես որ մի անգամ լրագրողների հետ զրույցի ժամանակ ասաց, որ պաշտոնական Անկարան մի քանի անգամ, որպես հարթակ, առաջարկել է իր դերը ռուս-ուկրաինական հակամարտության հանգուցալուծման համար, բայց արի ու տես՝ դա նրանց մոտ չի ստացվել: Այսինքն, այս պարագայում նա կարծում է, որ եթե դու գնում ես այլ լիդերների դուռը, ուրեմն ինչ-որ տեղ արհամարհում ես իրեն կամ չեզոքացնում ես իր նախորդ առաջարկած տարբերակները, որովհետեւ անմիջապես դրանից հետո եղել է Դոնբասի մասով այդ ուլտիմատումային խոսույթը»,-ասաց Կարապետյանը: Ուկրաինայում պայթած էներգետիկ ոլորտին վերաբերող կոռուպցիոն սկանդալը պատահական չեղավ, այն իրավիճակ փոխեց, եւ դա հենց այնպես չտարածվեց, որովհետեւ ստացվում է, որ Անդրեյ Գիրկայը, որն Ուկրաինայի օրենսդիր մարմնի նախկին պատգամավոր է, ռուսական ՖՍԲ-ի աշխատակից է եւ տասնամյակներ աշխատել է ռուսական հատուկ ծառայությունների համար ու ինֆորմացիա տրամադրել հատկապես Ուկրաինայի ատոմային էներգետիկայի մասով՝ համոզված է միջազգայնագետը: Այս սկանդալի, դրա քննարկումների ու դժգոհությունների, Թրամփի կողմից հնչեցված ուլտիմատումների ֆոնին Զելենսկին ստիպված եղավ ուղիղ տեքստով՝ մոտ տասը րոպե խոսել իր եւ Ուկրաինայի՝ բարդ ընտրության առաջ կանգնած լինելու մասին: Սակայն նա Ֆրանսիա է մեկնում պաշտոնական այցով, այնտեղ էլ այցի ընթացքում կնքվել է ինքնաթիռների, հրթիռների ու հակաօդային պաշտպանության համակարգերի մատակարարման վերաբերյալ համաձայնագիր: «Այս ամեն ինչը եւս մեսիջ է, որ պատերազմը շարունակվում է, անկախ բոլոր սցենարներից, անկախ բոլոր 28 կետերից, անկախ ցանկացած աշխարհաքաղաքական կենտրոնի առաջարկած հարթակներից եւ տարբերակներից: Ծանր տարի է սպասվում»,-ասաց Կարապետյանը: Սակայն ռուսական կողմն էլ շեշտում է, որ պատրաստ է հակամարտության կարգավորման գործընթացին, բայց միեւնույն ժամանակ կարծում է, որ Ուկրաինայում մարդիկ «ոսկե կճուճների» վրա են նստած, ու դժվար թե նրանց հուզի երկրի հետագա ճակատագիրը: Միջազգայնագետը շեշտում է մի կարեւոր հանգամանք եւս. Ուկրաինային տրվող ռազմական օգնության գրեթե կեսը կրճատվել է, այսինքն՝ գրեթե ոչ մի երկիր, բացի Ֆրանսիայից, զենք, սպառազինություն չի մատակարարում Ուկրաինային:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am